# ՀՈՐԻԶՈՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

horiZon | HÉBDOMADAIRE ARMÉNIEN – Supplément en français | ARMENIAN WEEKLY – English supplement

VOL. 40 / No. 1 (2031), 12+4+4+4 էջ / $1.75 ՅՈՒՆԻՍ 4 / 4 JUIN / 4 JUNE, 2018







## Հայաստանի Հանրապետութեան եւ Մայիսեան հերոսամարտերուն հարիւրամեակը միասնական շարքերով ոգեկոչուեցաւ Մոնթրէալի մէջ




Կիրակի, 13 Մայիս 2018-ին, Centre Arménie-ի շքեղ սրահին մէջ տեղի ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան եւ Մայիսեան հերոսամարտերուն հարիւրամեակին նուիրուած տօնակատարութիւն, կազմակերպութեամբ Քեպէգի Հայ Համայնքի Միացեալ Մարմնին, հովանաւորութեամբ Գանատայի մօտ ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան պրն. Լեւոն Մարտիրոսեանի եւ ներկայութեամբ գաղութիս հայ համայնքի բոլոր ներկայացուցիչներուն, հոգեւոր հայրերուն եւ մօտ 1000 հանդիսատեսներու։ Մանրամասնութիւնները կարդալ էջ 4։





Les saveurs de la méditerrannée...
le bon goût du partage !
Suivez-nous !
www.groupeadonis.ca
MARCHÉ
ADONIS

# 10 Տարի՝ Յստակ Առաքելութեամբ Ու Արդիւնաւէտ Աշխատանքով

## Հարցազրոյց Սփիւռքի ընթացաւարտ նախարար Հրանուշ Յակոբեանի հետ (Բ. Մաս)

ՀԱՐՑՈՒՄ.- Տիկի՛ն Յակոբեան, սփիւռքում մենք ունենք 1000-ից աւելի կրթօճախներ: Սակայն էլ ի՞նչ դպրոց՝ առանց հայալեզու գրականութեան, նոր հրատարակուած գրքերի ու ձեռնարկների: Այս նպատակով նախարարութիւնն իրականացնում է համայնքային դպրոցները դասագրքերով ապահովման ծրագիրը: Քանի՞ գիրք է առաքուել համայնքներին, ինչպիսի՞ն էր վիճակը մինչ նախարարութեան ստեղծումը: Խնդրում եմ՝ անդրադարձէք նաեւ նախարարութեան հետազօտութիւնների ծրագրին:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Ինձ համար աւելի ուրախալի լուր, քան նոր դպրոցի հիմնումն է, չկայ: Առաւել ոգեւորիչ է, երբ կրթօճախ է բացւում սփիւռքում, որտեղ մեր հայրենակիցներն ամէն օր պայքարում են իրենց ինքնութեան պահպանման համար: Հայկական սփիւռքում դպրոցը դառնում է՛ւ հայրենիքի մի մասը, է՛ւ հայապահպանութեան կենտրոն: Ահա այս ամէնի գիտակցմամբ Հայաստանի Հանրապետութեան կրթութեան եւ գիտութեան նախարարութեան հետ համատեղ իրականացնում ենք սփիւռքի կրթօճախներին ուսումնական, մեթոտական գրականութեան, ուսումնաօժանդակ նիւթերի տրամադրման, սփիւռքահայ ուսուցիչների վերապատրաստման, հայոց լեզուի համահայկական օլիմպիականների, հայագիտական գիտելիքների մրցոյթների կազմակերպման պետական ծրագրերը: Նպատակն է սփիւռքում գործող ամէնօրեայ եւ մէկօրեայ դպրոցներին, կրթամշակութային այլ հաստատութիւններին անհրաժեշտ եւ օգտակար ուսումնական, մեթոտական գրականութեամբ, ուսումնաօժանդակ, այդ թւում՝ ելեկտրոնային նիւթերով ապահովումը: Այս տարիներին 500 հազարից աւելի գիրք է առաքուել սփիւռք, իսկ վերջին երեք տարիներին՝ 150.000, այն դէպքում, երբ մինչեւ նախարարութեան ստեղծումը առաքուած գրականութիւնը 10 հազար կտորից աւելի չի եղել: Ի հարկէ, սա ակնառու փաստ է, սակայն պէտք է շարունակենք այս գործը, եւ սփիւռքի մեր դպրոցները պէտք չունենան հայալեզու ուսումնական, գեղարուեստական գրականութեան պակաս:

Այդ նպատակով նաեւ պատրաստուեցին արեւմտահայերէնի «Այբբենարան» եւ «Ընթերցարան» դասագրքերը, սփիւռքեան մասնագէտների մասնակցութեամբ ստեղծուեցին «Արեւմտահայերէնի քերականութեան» առաջին եւ երկրորդ ձեռնարկները:

Մեր գործունէութեան առաջին իսկ օրից մենք սկսեցինք հետազօտել հայկական սփիւռքը, համայնքները, նրանց արդի վիճակն ու մարտահրաւէրները: Սփիւռքի բազմաթիւ եւ բազմաբնոյթ հիմնախնդիրները գիտականօրէն վեր հանելու, վերլուծելու, դժուարութիւնների մէջ յայտնուած համայնքային կեանքը լուսաբանելու, համայնքների պատմութիւնը գրի առնելու նպատակով սփիւռքի նախարարութեան կողմից պարբերաբար տրւում են թեմաթիք հետազօտութիւնների պատուէրներ Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւնների ազգային ակադեմիայի պատմութեան, արեւելագիտութեան, գրականութեան, լեզուի, տեղեկատուութեան եւ աւտոմատացման խնդիրների, ազգագրութեան եւ հնագիտութեան հիմնարկներին, Երեւանի պետական համալսարանին, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամին, Հայաստանի պետական մանկավարժական համալսարանին, «Վերադարձ Հայաստան» հիմնադրամին, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազօտական կենտրոնին, Պէյրութի Հայկազեան համալսարանի Հայկական սփիւռքի ուսումնասիրութեան կենտրոնին եւ գիտական այլ հաստատութիւններին: 2009-2017 թուականներին կատարուել է 104 նմանատիպ հետազօտութիւն: Ի դէպ, մեր առաջարկով է, որ ՀՀ Գիտութիւնների ազգային ակադեմիայի 6 հիմնարկներում բացուել են սփիւռքի բաժիններ:

Հ.- Համազգային իւրայատուկ հաւաքներ են Հայաստան-սփիւռք համաժողովները: Թոյլ տուէք ասել, որ դրանցից իւրաքանչիւրը քննարկումների մեծ հարթակ, համահայկական հարցերի խօսափող, նոր գաղափարների շտեմարան լինելուց զատ՝ դառնում են նաեւ հետաքրքիր, իւրօրինակ համահայկական տօներ: Այո՛, տօն է, երբ հանդիպում, իրար ճանաչում ու կապ են հաստատում հայերը Աւստրալիայից ու Արժանթինից, Չինաստանից ու Լիբանանից, Եւրոպայից եւ Լատինական Ամերիկայից: Տիկի՛ն Յակոբեան, նախարարութեան ստեղծումից յետոյ համահայկական 3 համաժողովներն ամփոփելով՝ ի՞նչ արդիւնքներ կարող էք արձանագրել:

Պ.- Նախարարութեան հիմնադրումից յետոյ մենք անցկացրել ենք Հայաստան-սփիւռք 3 խոշոր համահայկական համաժողովներ 2011, 2014 եւ 2017 թուականներին: 2017 թուականի սեպտեմբերի 18-20 Երեւանում կայացաւ «Փոխադարձ վստահութիւն, միասնականութիւն եւ պատասխանատուութիւն» խորագրով Հայաստան-սփիւռք վեցերորդ համահայկական համաժողովը, որն իր աշխարհագրութեամբ, մասնակիցների թւով եւ բարձրացրած հարցերի արդիականութեամբ իրօք աննախադէպ իրադարձութիւն էր: Ի տարբերութիւն միւս համաժողովների՝ 6-րդ համաժողովը ունէր մի շարք առանձնայատկութիւններ: Առաջին անգամ համաժողովի 4 գլխաւոր ուղղութիւնների անցկացման եւ կազմակերպման համար ընտրուել էին պատասխանատու գերատեսչութիւններ՝ սփիւռքի, պաշտպանութեան, արտաքին գործերի եւ միջազգային տնտեսական համարկման եւ բարեփոխումների նախարարութիւնները: Համաժողովի մէկ այլ առանձնայատկութիւնը կլոր սեղան-քննարկումների անցկացումն էր: Այդ օրերին ներկայացուեցին նաեւ Հայաստանի Ա. Հանրապետութեան հռչակման եւ մայիսեան հերոսամարտերի 100-ամեակի, ինչպէս նաեւ Էրեբունի-Երեւանի 2800-ամեակի տօնակատարութիւնների նախնական ծրագրերը:

Չեմ կարող դարձեալ չնշել, որ համաժողովն առանձնացաւ նաեւ մասնակիցների թւով՝ 1827 հոգի, եւ աշխարհագրութեամբ՝ 71 երկիր: Միւս կողմից, առաջին անգամ համաժողովի ընթացքում յայտարարուեց յաջորդ համաժողովի օրակարգը, որը նուիրուելու է հայադարձութեան թեմային: Պէտք է փաստել, որ համահայկական հերթական այս հաւաքն ամենամեծ հարթակն էր՝ ի մի բերելու եւ ամփոփելու Հայաստան-սփիւռք գործակցութեան ձեռքբերումները, նախանշելու հայութեան առջեւ ծառացած մարտահրաւէրները եւ ապագային միտուած անելիքները: Համաժողովը միակն է իր տեսակի մէջ՝ որպէս Հայաստան-սփիւռք-Արցախ եռամիասնութեան իրական համախմբման եւ հայութեան ուժի ցուցադրման աննախադէպ հարթակ:

Հ.- Տիկի՛ն Յակոբեան, բազմիցս եմ ականատես եղել, թէ ինչպիսի՛ իւրայատուկ ջերմութեամբ էք գովաբանում, գնահատում, փայփայում մեր սիրիահայ հայրենակիցներին: Յաճախ էք ասում, որ մենք՝ հայաստանցիներս, նրանցից պէտք շատ ու շատ հարցերում օրինակ վերցնենք: Սփիւռքի նախարարութիւնը մեծ պատասխանատուութեամբ զբաղւում է սիրիահայերի խնդիրներով, օգնում, դառնում նրանց աջակիցն ու հաւատարիմ ընկերը Հայաստանում:

Պ.- Ի հարկէ, այսօր էլ Հայաստանի Հանրապետութեան պետական քաղաքականութեան հիմնական նպատակն է սիրիական հակամարտութեան արդիւնքում Հայաստանում հաստատուած սիրիահայերին սահուն կերպով համարկել հայաստանեան կեանքին: Գլխաւորը՝ նրանք դառնան ՀՀ քաղաքացիներ եւ հայրենիքում չունենան փախստականի կարգավիճակ: Այդ նպատակով սիրիահայերին պարզեցուած կարգով շնորհւում է քաղաքացիութիւն, ինչի արդիւնքում Հայաստանում ապաստան գտած շուրջ 22 հազար սիրիահայերից այսօր արդէն 19 հազար 800-ը դարձել է ՀՀ քաղաքացի, 1500-ը ստացել կացութեան կարգավիճակ եւ միայն 700-ին է տրուել փախստականի կարգավիճակ: Մեզ յաջողուել է նրանց համարկել ՀՀ կրթական, մշակութային, տնտեսական, առողջապահական եւ այլ ոլորտներում:

Ուրախալի է, որ սիրիահայերն այսօր Հայաստանում իրենց լաւ են զգում: Նրանք ստեղծող, արարող մարդիկ են, ովքեր իրենց աշխատանքային մշակոյթն են ներդրել մեզանում, ընդգրկուել են տարբեր ոլորտներում, ստեղծել իրենց պիզնես ծրագրերը եւ յաջողութեամբ զարգացնում են դրանք:

Հայաստանը նաեւ հալէպում է սիրիահայերին եւ սիրիացիներին աջակցութիւն ցուցաբերել՝ իրականացնելով մի շարք ծրագրեր. մի քանի օդանաւով մեծ քանակութեամբ օգնութիւն է հասցուել Սիրիա:

Դեռեւս շարունակւում է սիրիահայերի հոսքը Հայաստան, ամէն օր մեզ այցելում է 20-30 սիրիահայ: Մեր նախարարութիւնում գործում է աշխատանքային խումբ, միջգերատեսչական յանձնաժողով՝ իմ գլխաւորութեամբ, որի մասնակիցն են ՀՀ բոլոր նախարարութիւնները ներկայացնող փոխնախարարները: Յանձնաժողովում քննարկւում եւ լուծումներ են տրւում սիրիահայերի հիմնախնդիրներին:

Հ.- Տիկի՛ն Յակոբեան, սփիւռքի նախարարութեան առաքելութիւններից մէկն էլ ազգային ներուժի համախմբումն է: Քանի՞ համահայկական մասնագիտական ընկերակցութիւն կայ այսօր, եւ ինչպէ՞ս է նախարարութիւնն աշխատում նրանց հետ:

Պ.- Սփիւռքը կայ, գործում է, նրա տրոփիւն սիրտն են մեր աւանդական կառոյցները եւ նրանց կից քոյր կառոյցները, ՀԲԸՄ-ը, մարզական, կանանց, երիտասարդական բազում կառոյցներ: Առանձնապէս պէտք է ընդգծել Հայ եկեղեցու դերակատարութիւնը ազգային խնդիրների լուծման, հայ ինքնութեան հզօրացման գործում: Մենք հաստատուն կապեր ենք ստեղծել նրանց հետ: Շատերի հետ կնքել ենք գործընկերութեան համաձայնագրեր, յուշագրեր, կազմակերպել բազմաբովանդակ ձեռնարկներ: Ես երախտապարտ եմ մեր սփիւռքեան կառոյցներին, որոնց օգնութեամբ էլ ոչ միայն կայացաւ, այլեւ ընդունելի դարձաւ նախարարութիւնը, հաստատուեցին գործընկերային յարաբերութիւններ: Սակայն մենք սփիւռքի օգնութեամբ նորը, առաջադէմը Հայաստան բերելու համատեղ ծրագրեր կազմելու համար նպատակայարմար գտանք նաեւ մասնագէտներին համախմբել, մասնագիտական ցանցեր ստեղծել:

Այսօր նաեւ մեր աջակցութեամբ գործում են ճարտարապետների եւ ճարտարագէտների համահայկական միութիւնը, Լրատուամիջոցների, Ֆինանսիստների եւ բանկիրների համահայկական ընկերակցութիւնները, Իրաւաբանների համահայկական խորհրդաժողովը, «Հայկական առեւտրային ցանց» (ՀԱՑ) կազմակերպութիւնը, «Ակցիա առողջութիւն Հայաստան-Ֆրանսա» կազմակերպութիւնը, աշխարհի հայ նկարիչների, հայ գրողների միութիւնները, Հայ բժիշկների միջազգային, Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտէները, Հայ ոսկերիչների միութիւնը, Համահայկական կրթական խորհրդաժողովը եւ այլն: Մինչ այժմ անցկացուել են համահայկական մասնագիտական մօտ 100 համաժողով, որոնց ընթացքում ստեղծուել են նոր ցանցեր, կեանքի են կոչուել յաւակնոտ գաղափարներ, խորացել է յատկապէս սփիւռք-սփիւռք կապը:

Իսկ ամենակարեւորը՝ նախարարութիւնում ստեղծուել է մասնագէտների, փորձ ունեցող մարդկանց մի անձնակազմ, որը ճանաչում է բազմաշերտ, հետաքրքիր, պահանջկոտ հայկական սփիւռքին եւ կարողանում է արդիւնաւէտ աշխատել նրա հետ: Ես երջանիկ եմ, որ հնարաւորութիւն եւ բախտ եմ ունեցել աշխատել իմ ազգի տարբեր հատուածների հետ, սովորել նրանցից, գործակցել նրանց հետ եւ փորձել միշտ բարձր պահել հայի, հայութեան եւ Հայաստանի պատիւը:

Հ.- Տիկի՛ն Յակոբեան, այսօր սփիւռքում հազարաւոր հայորդիներ սպասում են նախարարութեան ամառային ծրագրերի մեկնարկին, արդէն լրացրել են մասնակցութեան յայտերը, եւ նրանցից շատերը հայրենիքը ճանաչելու, ընկալելու ու մտապահելու են հէնց սփիւռքի նախարարութեան տարբեր ծրագրերի միջոցով: Ի՞նչ է խոստանում 2018-ի ամառը: Խօսենք մի փոքր անելիքների մասին:

Պ.- Ինչպէս ամէն տարի, այս տարի նոյնպէս նախարարութեան բոլոր ծրագրերը կեանքի կը կոչուեն: Ընդհանրապէս մենք մեր գործունէութեան հիմքում դրել ենք արդիւնաւէտութեան եւ տրամաբանուած շարունակականութեան գաղափարը: Այս ծրագրերի իրականացումն ինքնանպատակ չէ, սա սփիւռքի պահանջն ու հրամայականն է: Ահա այսպէս են ստեղծուել ու կազմակերպուել «Արի տուն», «Սփիւռք» ամառային դպրոց ծրագրերը, մեր փառատօներն ու խորհրդաժողովները, մրցանակաբաշխութիւնները, հրատարակութիւնները, եւ ի վերջոյ՝ Հայաստան-սփիւռք համաժողովները: Ուրախ եմ, որ այս տարի եւս նախարարութեան ամառը յագեցած եւ ծանրաբեռնուած է լինելու: Միայն մէկ փաստ նշեմ. «Իմ Հայաստան» փառատօնն ունենալու է 1000-ից աւելի մասնակից: Այսօր կառավարութիւնում են արդէն սիրիական հակամարտութեան պատճառով հարկադիր տեղահանուած եւ Հայաստանի Հանրապետութիւնում պաշտպանութիւն հայցող անձանց համարկման 2018-2022 թուականների եւ արեւմտահայերէնի պահպանման, զարգացման եւ կանոնարկման ռազմավարութիւնները, մշակւում է հայրենադարձութեան գործընթացի խթանման եւ կազմակերպման ռազմավարութիւնը:

Այսինքն նախարարութիւնը հաւատարիմ է իր որդեգրած սկզբունքներին, աշխատում է յանուն Հայաստանի, սփիւռքի ու Արցախի բարօրութեան: Այլ կերպ լինել չէր կարող, որովհետեւ այս չափանիշները մենք մեր առաջ դրեցինք նախարարութեան հիմնադր-

10 Տարի... Շար. էջ 9

# Շուշին Մեր Ճակատագիրն Է (Ազատագրութեան 26-ամեակ)

Ո՛չ թէ սպանդի, արհաւիրքի ու թալանի ճակատագիրն է, այլ պայքարի, տոկալու եւ վերականգնելու: Ո՛չ թէ ցաւի ու մորմոքի, լաց ու կոծի ճակատագիրն է Շուշին, այլ տառապանքը շրջանցելու, խիզախօրէն ոտքի կանգնելու եւ ի սրտի մաքառելու բարբարոս թշնամիին դէմ՝ յանուն ազատութեան, մայր հողի ու հայրենիքի պաշտպանութեան: Ահա այս ճակատագիրի գեղեցկութեան ու վեհութեան, անով հպարտանալու եւ վերապրելու գիտակցութեան մասին է խօսքը, այսօր եւ ընդմիշտ:

Այդուհանդերձ, մենք մոռացութեան չենք տուած այն ահաւոր ջարդերը (1920), որոնք տեղի ունեցան լոյսի ու մշակոյթի մայրաքաղաք Շուշիի մէջ, ձեռամբ թուրք ու թաթարածին հորդաներու, մուսաւաթ թէ ազերի մարդակերներու, որոնք դաւադրաբար մուտք գործեցին հայասիրտ ու հայաշունչ Շուշի եւ շարունակել ուզեցին հայոց սպանդը, իր լրումին հասցնելու Մեծ եղեռնը:

Ճիշդ է, հայութիւնը, շնորհիւ իր ֆետայիներուն, դիմեց ինքնապաշտպանութեան, սակայն ջարդն ու աւերը, քանդումն ու հրկիզումը աւելի գերակշռող էին, եւ որոնց իբրեւ հետեւանք աւերակոյտի վերածուեցաւ Շուշին եւ մնաց այդպէս մինչեւ մեր օրերու զարթօնքը՝ ազգային ազատագրական պայքարի նորովի բռնկումը (1988), մինչեւ անոր՝ Շուշիի վերատիրացումը:

Արդ, 26 տարի առաջ հայ ժողովուրդի ժամանակակից պատմութեան մէջ յատկանշական եւ պատմական դէպք մը արձանագրուեցաւ: Անիկա սովորական պատահար մը չէր, այլ ամբողջ ժողովուրդի ներկան ու ապագան կերտող իրադարձութիւն:

Փաստօրէն, 9 մայիս 1992-ին, Արցախի ազատագրական պայքարի ամէնէն դժուար, արիւնալի եւ վտանգաւոր օրերուն, հայութիւնը կրցաւ ո՛չ միայն յաղթել թուրք-ազերի թշնամիին, ծունկի բերել, այսպէս ասած, անոր «անպարտելի» բանակը, գազանացած ու վարձկան զինուորը, այլեւ՝ շնորհիւ մերօրեայ ֆետայիներու հզօր կամքին, առիւծ դարձած սրտին, անխնայ հարուածող բազուկին, ազատագրուեցաւ հայոց աշխարհի թագուհին՝ Արցախի Շուշին:

Այո՛, հայութիւնը, ապաւինելով իր ռազմագէտ, քաջ ու խելացի հրամանատարներուն եւ գիտակցելով պահու լրջութիւնը, հակառակ Արցախի դաժան պայմաններուն, որոշեց ամէն գնով հայութեան վերադարձնել հայոց անառիկ բերդաքաղաքը՝ Շուշին:

Մեր օրերու անվախ ու կտրիճ հայ ֆետային որոշեց ամէն գնով նուաճել լերան գագաթը եւ հազարամեայ լոյսի ու մտքի քաղաքէն դուրս շպրտել բարբարոս թուրք-ազերին, որ դաւադրաբար գրաւած էր Շուշին եւ հոնկէ ահ ու սարսափ կը տարածէր ամբողջ Ստեփանակերտի վրայ:

Քանի մը օրերու պատրաստութիւնը բաւարար էր, որ տրուէր յարձակելու ազդանշանը: 8-9 մայիսին կը սկսէին երեք ուղղութիւններէ յարձակումներ: Հայ ազատամարտիկը՝ ժպիտը դէմքին եւ սրբազան զէնքը ձեռքին, անակնկալի բերելով վայրագ ազերին, մտաւ Շուշի: Թշնամին իր կարգին ահ ու սարսափի մատնուած՝ փախուստ տուաւ հայոց մշակոյթի քաղաքէն:

Մեր հայրենապաշտ տղաքը, ինչպէս միշտ, ամէն զոհողութիւն յանձն առած, սկսան մագլցիլ Շուշիի ժայռերն ի վեր, անոնք իրենց պինդ ու ամուր ձեռքերով ողջագուրուեցան հայոց լեռներուն հետ, հասան կատարին ու տնկեցին հայոց Եռագոյն դրօշը՝ արժանապատուութեան եւ յաղթանակի դրօշակը:

Շուշին ազատագրուեցաւ, ու յաղթեց հայութիւնը: Ղազանչեցոց սուրբ եկեղեցւոյ սրբատաշ զանգերը դարձեալ սկսան ղօղանջել հայօրէն եւ անվախօրէն: Իսկ վախկոտ եւ մարդակեր թշնամին սարսափահար փախուստ տուաւ մեր դարաւոր քաղաքէն՝ պարտուած եւ ամօթաբար:

Եւ այդ օրէն սկսեալ Արցախի ազատագրութեան կռիւները կը մտնէին նոր փուլ, եւ մեր հրաշք տղոց բազուկներուն հարուածներուն տակ կը կերտուէր աւելի քան տասը հազար քառակուսի քմ. տարածութիւն ունեցող Արցախ հայրենիքը:

Մենք կը հաւատանք, որ Արցախը մեր ամբողջ ազգին սեփականութիւնն է, անոր վերականգնումն ու պաշտպանութիւնը բոլորիս պարտքն է: Արցախի թէ հեռաւոր Լիզպոնի հողին վրայ իրենց թանկագին կեանքը նուիրած հայ հերոսներու արիւնը այն միւռոնն է, որով մենք պիտի մկրտուինք եւ միասնական մնանք:

Այսօր, Շուշին քար առ քար կը կառուցուի, թաղ առ թաղ կը լուսաւորուի, շրջան առ շրջան կը բարգաւաճի, թէեւ համեստ ու դանդաղ քայլերով, սակայն հաստատօրէն եւ առանց երկմտանքի: Հայութիւնը պարտաւոր է, երբեմնի «կովկասեան փոքր Փարիզ» կամ՝ «Կովկասի երաժշտանոց» անուանուած Շուշին վերակերտել, զայն դարձնելով հայոց մշակոյթի մայրաքաղաքի, ուր աշխարհահռչակ արուեստագէտներ, գրողներ, մտաւորականներ, գործիչներ ու հայասէր զանգուածներ այցելեն ու ցոյց տան իրենց տաղանդն ու ստեղծագործական աշխատանքը, ապրին ու ապրեցնեն հայ մշակոյթը, տեսնեն երբեմնի Շոշի կամ Շուշուայ բերդը եւ կը հմայուին անոր հրաշափառ տոկունութեամբ:

Հայոց ազատամարտիկներու սուրբ արեամբ ազատագրուած Շուշին հարկ է նոյն հաւատամքով եւ ջանադիր պատրաստակամութեամբ վերակառուցենք, վերստին անոր տալով լոյսի ու մշակոյթի մայրաքաղաքի շնորհաբեր տիտղոսը:

Ի զուր չէ ըսուած՝ «Ով տիրում է Շուշիին, նա տիրում է Արցախին»: Եւ այս ճիշդ ու անսակարկելի հասկացողութենէն թելադրուած հայութիւնը կը գտնուի մեր օրերու մեծագոյն մարտահրաւէրին դիմաց՝ վերականգնել Շուշին անյապաղ, որպէսզի անիկա դառնայ այն փարոսը, ճառագայթող միտքն ու հոգին, որով սերունդներ աւելի եւս պիտի հայանան, արմատանան ու ոգեւորուին:

Արդեօք չափազանցա՞ծ կ՚ըլլանք մեր սուր դատողութեան մէջ, եթէ երբեք ըսենք ու բազմիցս կրկնենք այն բիւրեղ ճշմարտութիւնը, թէ վերակառուցուած, առաւել գեղեցկացած ու վերաբնակուած Շուշին է այն կորիզը, որ մեզ պիտի առաջնորդէ դէպի ամբողջական ու միացեալ Հայաստանի վերակերտումին:

Յայտնապէս, Շուշուայ բերդի կատարէն տեսանելի են վեհանիստ Արարատի սրբազան գագաթները, ուր կը հանգչին հայոց աստուածութիւններու փաղանգներ:

ՀԱՄԲԻԿ ՊԻԼԱԼԵԱՆ

# Հայաստանի Հանրապետութեան եւ Մայիսեան հերոսամարտերուն հարիւրամեակը միասնական շարքերով ոգեկոչուեցաւ Մոնթրէալի մէջ

Կիրակի, 13 Մայիս 2018-ին, Centre Arménie-ի շքեղ սրահին մէջ տեղի ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան եւ Մայիսեան հերոսամարտերուն հարիւրամեակին նուիրուած տօնակատարութիւն, կազմակերպութեամբ Քեպէգի Հայ Համայնքի Միացեալ Մարմնին, հովանաւորութեամբ Գանատայի մօտ ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան պրն. Լեւոն Մարտիրոսեանի եւ ներկայութեամբ գաղութիս հայ համայնքի բոլոր ներկայացուցիչներուն, հոգեւոր հայրերուն եւ մօտ 1000 հանդիսատեսներու:

Ձեռնարկի բացումը կատարեցին Հայ Կաթողիկէներու, ՀՄԸՄ «Կամք»ի եւ ՀԲԸՄ-ի փողերախումբերը՝ նուագելով Գանատայի եւ Հայաստանի քայլերգներն ու օրուան խորհուրդը բնորոշող «Սարդարապատ»ը:

Գեղարուեստական բաժինին մէջ ՀԲԸՄ-ի «Ալեք Մանուկեան» վարժարանի 8-րդ կարգի աշակերտ Կարէն Գանըմեան արտասանեց Ժագ Յակոբեանի «Մենք» բանաստեղծութիւնը, որմէ ետք Քեպէգի Հայ Համայնքի Միացեալ Մարմնի ատենապետ պրն. Վիգէն Սարգիսեան փոխանցեց կազմակերպիչ մարմնի խօսքը, որուն մէջ շնորհաւորեց Հայաստանի նորընտիր վարչապետ պրն. Նիկոլ Փաշինեանին, մաղթելով որ առաջնորդէ Հայաստանը դէպի նոր եւ փայլուն յաջողութիւններ, կոչ ուղղեց Քեպէգի բոլոր հայ կուսակցութիւններուն, կազմակերպութիւններուն, միութիւններուն, վարժարաններուն եւ եկեղեցիներուն, որ շարունակեն միասնական աշխատանքը, մէկդի դնելով բոլոր տարբերութիւնները՝ ի շահ հայրենիքի բարելաւման եւ հայապահպանման: Ան ուրախութեամբ յայտնեց, թէ սոյն ձեռնարկի համագաղութային ջանքերով իրականացումը երազ մըն էր, որ մեծ յաջողութեամբ իրականացաւ: Ապա աւարտելով իր խօսքը՝ շնորհաւորեց Մայրերու տօնը:

«Նարեկ» վարժարանի երկրորդական Դ. կարգէն Սարին Ճանճիկեան Սարդարապատի ճակատամարտի հակիրճ պատմական մը ներկայացնելէ ետք արտասանեց Գէորգ Էմինի «Սարդարապատը» բանաստեղծութիւնը: Նշենք, որ գաղութիս երեք հայկական վարժարաններէն օրուան յայտագրին մաս կազմող աշակերտներուն ասմունքներու ընտրութիւնը կատարեց եւ փորձերուն հսկեց տիկ. Անահիտ Պալեան:

Հայասատանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան վսեմաշուք Լեւոն Մարտիրոսեանի ուղերձի ընթերցումը կատարեց, հայերէն, ֆրանսերէն եւ անգլերէն լեզուներով, Գանատայի մօտ ՀՀ հիւպատոս պրն. Արա Մկրտչեան, որմէ ետք պրն. Համբիկ Ճապուրեան տուտուկի վրայ նուագեց Կոմիտասի «Տլէ Եաման»ը եւ Գրիգոր Նարեկացիի «Հաւուն Հաւուն»ը:

Բեմ բարձրացաւ հայրենի երգչուհի Կապի Կալոյեան, որ տուտուկի ընկերակցութեամբ մեկնաբանեց «Պիտի գնանք վաղ թէ ուշ» երգը, ապա հայրենի երգիչ Ռուբէն Սասունցի մեկնաբանեց «Կենաց հայերի» երգը, զոր նուիրեց մեր հայրենիքին համար զոհուած հայ զինուորներուն:

Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի «Բաստրմաճեան» երկրորդականի Ե. կարգի աշակերտ Ժագ Աւագեան արտասանեց Ժագ Յակոբեանի «Կարմիր, Կապոյտ, Նարնջագոյն» բանաստեղծութիւնը, ապա կենսագրականը ներկայացնելէ ետք, բեմ հրաւիրեց օրուան պատգամաբեր, Հայաստանի Հանրապետութեան ԳԱԱ-ի Պատմութեան Ինստիտուտի տնօրէն դոկտ. Աշոտ Մելքոնեանը, որ յայտնեց, թէ վերջերս Հայաստան անցուց ճակատագրական պահեր, սակայն իշխանափոխութիւնը կատարուեցաւ շատ սահուն ձեւով, ինչ որ արդիւնք էր պետականութեան բարձր գիտակցումին, որ կերտուած էր 1918 թուականին մեր արեան գնով պարտադրած եւ ձեռքբերած անկախութեամբ: Ան պատմականը կատարեց Հայաստանի Հանրապետութեան պետականութեան ստեղծման, չեշտելով որ այն օրերուն գոյութիւն չունէր ներկուսակցական խնդիր, այլ կար միասնական գաղափար՝ կերտել Ազգային Պետութիւն եւ ստեղծել հայոց պետականութիւն: Ան դրուատեց Քեպէգի հայ համայնքի միասնականութիւնը եւ մաղթեց, որ օր մը ազգովին տունդարձի ճամբան բռնենք դէպի Հայաստան:

Շարունակելով գեղարուեստական յայտագիրը, Ռուբէն Սասունցի մեկնաբանեց «Հայրենասիրական երգերու շարան», «Սասնայ եարխուշտա», «Հայ ֆիտայի», «Ֆիտայական երգերի շարան», «Մշեցի» եւ «Սասնայ պար» երգերը եւ Կապի Կալոյեան մեկնաբանեց «Թամամ աշխարհ», «Մեր պարերը», «Սարի աղջիկ», «Գետաշէն», «Հայեր միացէք», «Սարերի հովին մեռնեմ» եւ «Հայաստան» երգերը: Հանդիսատեսները շուրջպարերով խանդավառութիւն եւ տօնական մթնոլորտ ստեղծեցին սրահին մէջ: Վերոյիշեալ երգերուն ընկերացան Համազգայինի «Անի» զոյգ պարախումբերը, գեղարուեստական ղեկավարութեամբ՝ Եւա Հայրապետեանի եւ Ծօ Աւագեանի:

Ձեռնարկը փակուեցաւ Կապի Կալոյեանի եւ Ռուբէն Սասունցիի՝ «Հայեր Միացէք» զուգերգով:

Ձեռնարկի աւարտին պրն. Վիգէն Սարգիսեան յատուկ շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք նպաստեցին սոյն ձեռնարկի կազմակերպական աշխատանքին եւ յաջողութեան:

Ձեռնարկէն ետք ներկաները ուղղուեցան սրահի ներքնայարկը, ուր տեղի ունեցաւ սուրճի սպասարկութիւն եւ կարկանդակի հատում:

Մարալ Նազարեան

Այցելեցէք hitunes.ca կայքէջը եւ օրական 24 ժամ ունկնդրեցէք Սառա Եղիայեանի կողմէ ընտրուած հայկական երգերը
HITUNES.CA

Ունկնդրեցէք triktrak.ca կայքէջի հայկական համացանցային ռատիոժամի երգերը օրական 24 ժամ, իսկ ամէն հինգշաբթի երեկ. ժամը 8:00 - 9:00 լսեցէք շահեկան հարցազրոյցներ
TRIKTRAK.CA

# Թրքացած հայեր ու ծագման հարցին հետեւանքով յառաջացած ողբերգական այլ պատմութիւններ

Անցեալ ամիս Թրքական կառավարութեան կողմէ ստեղծուած էր կայք մը, ուր Թուրքիոյ քաղաքացիները կարելիութիւն պիտի ունենային որոնել իրենց արմատները՝ հասնելով մինչեւ 1850-ականներու կէսերը։ Տպագիր ու հասարակական ցանցերուն մէջ հրապարակուած են հարիւրաւոր պատմութիւններ, որոնք խուճապ յառաջացուցած են Թուրքիոյ մէջ եւ անոր սահմաններէն դուրս։ Կան նաեւ քանի մը պատմութիւններ Թուրքերու մասին, ովքեր յայտնաբերած են, որ ունին ալպանական, արաբական, Պոնտոսի յոյներու, եւ որ «ամենավատն է»՝ հայկական արմատներ։ Անոնք նոյնիսկ յօդուածներ ստորագրած են, ուր գրած, որ ծայրայեղ ազգայնական ու ցեղապաշտական կուսակցութիւններու որոշ անդամներ վտարուած կամ կորսնցուցած են իրենց կոչումները, հոգեկան տագնապի ենթարկուած են ու, նոյնիսկ, անձնասպանութեան դիմած են, երբ իմացած են իրենց հայկական արմատներուն մասին։

Արդեօք այս պատմութիւնները ճի՞շդ են, թէ չափազանցուած. այնուամենայնիւ ծագումի խնդիրը ճգնաժամային, որոշ պարագաներու նոյնիսկ մահացու է Թուրքիոյ մէջ։ Վերջին դէպքը կապուած է Հրանդ Տինքի հետ, որ անընդհատ կը հալածուէր, կը հետապնդուէր՝ «Թրքութիւնը վիրաւորելուն համար» եւ ի վերջոյ սպաննուեցաւ այն բանէն ետք, երբ բացայայտեց, որ Քեմալ Աթաթուրքի որդեգիր դուստրը՝ Թուրքիոյ առաջին տիկին ռազմական օդաչու Սապիհա Գէոքչէնը Հայոց Ցեղասպանութեան հետեւանքով որբացած հայ աղջիկ մը եղած է։ Այլ դէպքով մը Թուրքիոյ նախկին նախագահը խորհրդարանի ընդդիմադիր կուսակցութեան անդամին դէմ դատական հայց ներկայացուցած է այն բանի համար, որ վերջինս պնդած էր, թէ «կը սերի Կայսերիի (Կեսարիա) հայկական ընտանիքէ մը»։

Դեռ աւելին, երկրի մը մէջ, ուր հայկական ապրանք վաճառելը անգամ ամենամեծ մեղքը կը համարուի, կան բազմաթիւ փաստագրուած ու փաստեր չունեցող պատմութիւններ հայկական ծագում ունեցող յայտնի Թուրքերու մասին. անոնց կարգին են՝ Թուրքիոյ նախկին նախագահը, նախկին նախագահներէն մէկուն կինը եւ ընդդիմադիր քանի մը քաղաքական գործիչներ։ Փաստագրուած պատմութիւններէն մէկուն մէջ յիշուած է, որ ընդդիմութեան ծայրայեղ ազգայնական նախկին առաջնորդին ընտանիքը իրականութեան մէջ Սեւծովեան շրջանի իսլամացած հայ ընտանիքներէն եղած է, եւ այդ ընտանիքին հայ ժառանգորդները ներկայիս Քանատա կ'ապրին։

Երբ ծագումնաբանական այս կայքը պաշտօնապէս հանրային դարձաւ, գիտ անմիջապէս հետաքրքրեց, թէ այնտեղ ինչպէ՞ս յիշատակուած է ծպտեալ հայերուն (հայերն ու անոնց ժառանգորդները, որոնք բռնի կրօնափոխ դարձած են Հայոց Ցեղասպանութեան ընթացքին) ծագումը։ Այդ արագ հետազօտութիւնը ցոյց տուաւ, որ անոնցմէ ոչ մէկը յիշատակուած է որպէս հայ։ Անոնց ընտանեկան պատմութիւնը կը սկսի արդէն իսլամացած ու իսլամական անուն կրող իրենց նախնիներուն անունէն։ Հակառակ այն բանին, որ կան ապացոյցներ այն մասին, որ կառավարութիւնը մանրամասն արձանագրութիւններ կը պահէ Թուրքերուն եւ քիւրտերուն մէջ կրօնափոխ դարձած հայերուն մասին, այդ արձանագրութիւնները չեն տարածուած կամ առկայ չեն այս նոր կայքին մէջ։ Հետաքրքրական է, որ ապացուցուած է այն, որ բազմաթիւ հայեր սպանուած, կորած կամ տեղահանուած են Ցեղասպանութեան ընթացքին, սակայն անոնք այդ կայքին մէջ տակաւին կը յիշուին ողջերու կարգին։ Բազմաթիւ հայ ընտանիքներ, ովքեր գիտեն, թէ մինչեւ 1850-ական թուականներ ծնած իրենց մեծ հայրերն ու մեծ մայրերը ողբերգական ինչպիսի՞ ճակատագրի ենթարկուած են, այս կայքին մէջ կը յայտնաբերեն, որ այդ մարդիկը, համաձայն կայքին կեղծ տուեալներուն, դեռ հրաշքով ողջ են։

Ես կը փափաքէի ներկայացնել ծագումի հարցին առնչուող երկու հետաքրքրական եւ ոչ այնքան ընդհանրացած պատմութիւններ։

1880-ական թուականներուն, Մալաթիոյ գիւղերէն մէկուն մէջ հարուստ հայ ընտանիք մը կ'ապրէր։ Շրջանը անընդհատ ահաբեկչութեան ու ոտնձգութիւններու կ'ենթարկուէր քիւրտ ցեղախումբերու կողմէդ անոնք անընդմէջ կը յարձակէին շրջանի գիւղերուն վրայ։ Այդ ատեն հայերը կը սկսին ինքնապաշտպանական ուժեր կազմել ու համախմբել ֆետայիները, որպէսզի պաշտպանեն հայկական գիւղերը։ Հայ ֆետայի առաջնորդներէն մէկը անգամ մը կը դիմէ այդ հարուստ ընտանիքի նահապետին եւ գումար կը խնդրէ զէնք ու ձիեր գնելու համար։ Այդ հարուստ հայը կը պատասխանէ ըսելով, որ երկու օրուան ընթացքին կ'որոշէ՝ տա՞լ այդ գումարը, թէ ոչ։ Երկու օր անց, հայ ֆետային կը վերադառնայ, եւ հարուստ հայը կը մերժէ անոր գումար տալ։ Ֆետային առանց վարանելու կը կրակէ ու կը սպաննէ զինք։ Անոր այրին նորածին որդիին հետ կը փախչի Իզմիր (Զմիւռնիա-Ակունքի խմբ.), ուր ան կրօնափոխ կը դառնայ եւ իր որդին կը մեծցնէ՝ հայերուն նկատմամբ ծայրայեղ ատելութիւն սերմանելով անոր մէջ։ Այդ տղան Իսմէթ Ինոնիւն (1884-1973) է՝ Թուրքիոյ երկրորդ նախագահը Քեմալ Աթաթուրքէն վերջ ան, ըստ երեւոյթին, եղած է հայերուն ու Թուրքիոյ մէջ բնակող փոքրամասնութիւններու թշնամիներէն մէկը՝ Իթթիհատական առաջնորդներէն յետոյ։

Ինոնիւ 1942-ին օրակարգ կը բերէ «Ունեցուածքի հարկը» (Varlik Vergisi) մասին օրէնքը։ Ակնյայտ էր, որ սոյն օրէնքը կը հրապարակուէր՝ օգնելու Թուրքիոյ յաղթահարելու պատերազմական տարիներու տնտեսական դժուարութիւնները եւ նպատակ ունէր կործանել ազգային փոքրամասնութիւնները։ Հարկերը կը գանձուէին ըստ էթնիկ ծագումիդ հարկին քանակը, ընդհանուր ունեցուածքին հետ համեմատած, հայերուն համար կը կազմէր 232 տոկոս, 184 տոկոս՝ հրեաներուն, 159 տոկոս յոյներուն համար, իսկ Թուրքերուն համար՝ միայն 4,9 տոկոս։ Վճարելու համար անոնց կը տրուէր 15 օր, եւ ան, որ չէր կրնար վճարել, կը ձերբակալուէր եւ կը ղրկուէր երկրի արեւելեան շրջաններ՝ աշխատելու քարահանքերուն մէջ ճամբաներ եւ փապուղիներ կառուցելու։ Սա փաստօրէն կը նշանակէր փոքրամասնութիւններու հարստութեան փոխանցումը Թուրքերուն։

Բազմաթիւ հայեր իրենց ունեցուածքը չափազանց աժան գիներով վաճառելէ ետք, կը սնանկանային, սակայն, միաժամանակ չէին կրնար հաւաքել հարկերու պահանջուած գումարը եւ կը ղրկուէին աշխատաւորական ճամբարներ ու այնտեղ ալ կը մահանային։ 1964-ին՝ Կիպրոսի ճգնաժամի տարիներուն, Ինոնիւն կրկին ճնշում կը բանեցնէ յոյներուն վրայ։ Մօտաւորապէս 45.000 յոյներ տեղահանել կու տայ, անոնք միաժամանակ Թուրքիոյ ու Յունաստանի քաղաքացիներ էին։ Անոնց կը տրուի 10 օր, որպէսզի լքեն իրենց ունեցուածքը եւ մեկնին երկրէն։ Անոնց թոյլատրուած էր իրենց հետ միայն 20 տոլար ու 20 ք.կ. առնել։ Ինոնիւի հայկական ծագման մասին պատմութիւնը կը հաստատէ նաեւ յայտնի պատմաբան փրոֆեսոր Բարս Թուղլաճըն (Բարսեղ Թուղլաճեանը) (1933-2016), որ Ինոնիւի ընտանիքին բարեկամն էր։

Ալի Քեմալ եղած է Օսմանեան Կայսրութեան հանրածանօթ լրագրողներէն, իսկ 1910-ականներուն՝ «Իքտամ» պարբերականի խմբագիր։Ան նաեւ ընդդիմադիր Ազատութիւն եւ Համաձայնութիւն (Hürriyet ve Itilaf) Կուսակցութեան անդամ էր ու իշխող կուսակցութեան՝ Ittihat ve Terakki-ի (Միութիւն եւ

ԹՐՔԱՑԱԾ... Շար. էջ 6

Րաֆֆի Պետրոսեան
Անգլերէնէ թարգմանեց
Անի Մելքոնեան



























# Փորձութիւն Իշխանութեամբ

Հայաստանի խորհրդարանի կողմից Նիկոլ Փաշինեանին երկրի վարչապետ ընտրելու գործողութեամբ փակուեց Հայաստանում խաղաղ-յեղափոխական իշխանափոխութեան համաժողովրդական-հրապարակային պայքարի էջը եւ սկսուեց յաջորդ՝ պալատական իշխանափոխութեան գործընթացը։ Որքան էլ որ երկրորդը պայմանաւորուած է առաջինով, ակնյայտ է, որ այս երկուսը միանգամայն տարբեր երեւոյթներ են՝ ենթակայ իրենց իւրայատուկ ազդակների։

Արժանին մատուցելով շարժումը սկզբնաւորող եւ յաղթական աւարտին հասցնող առաջնորդի գործունէութեանը, ակնյայտ է, որ ներկայումս նա կանգնած է ոչ պակաս, եթէ չասենք շատ աւելի բարդ լուծելի խնդիրների առաջ։

Չենք ցանկանում կասկածել, որ Ն. Փաշինեանը անկեղծ է երկիրը համընդհանուր եւ համակարգային բարեփոխման ենթարկելու երէկուայ կոչերի՝ այսօրուայ խոստումների հարցում։ Հարցն այն է, թէ նա կը կարողանա՞յ արդեօք իրականացնել այն ամէնը, ինչի ակնկալիքով էլ, ըստ էութեան, տեղի ունեցաւ համաժողովրդական պոռթկումը։

Գաղտնիք չէ, որ պետական-իշխանական մեքենան միշտ էլ աւելի հզօր է, քան անհատներն ու խմբերը, եւ եթէ վերջիններս այդ համակարգը չփոխեն, համակարգը կը փոխի իրենց։ Ասուածը մարդկութեան հազարամեակների պատմութեամբ փաստուած իրողութիւն է, որի ականատեսը եղել ենք նաեւ մենք, եւ ոչ միայն հայեացք յարելով նախկին համայնավարական, կամ արաբական, կամ աֆրիկեան ու այլ երկրների օրինակին, այլ ինքներս զգացել ենք մեր մաշկի վրայ։

Որպէսզի երէկուայ բարքերը չշարունակուեն, այսօրուայ նորացող Հայաստանում անհրաժեշտ է ո՛չ միայն համակարգային փոփոխութիւն, այլեւ նախադրեալների ստեղծում հասարակական բարոյահոգեբանական մթնոլորտի վերափոխութեան համար։ Այո՛, նախաբարներին կարելի է փոխել, բայց ինչպէ՞ս անել, որ վաղը նորից այս կամ այն կուսակցութիւնը չթակի մարդկանց դուռն ու ընտրակաշառք չառաջարկի եւ ինչ անել, որ քաղաքացին մերժի ձեռնտու, սակայն արատաւոր գործարքը։ Ինչպէ՞ս անել, որ ոստիկանը, դատաւորն ու դասախօսը մերժեն կաշառքը, իսկ քաղաքացին հասնի այն գիտակցութեանը, որ մտքով անգամ չանցնի ծուռ ճանապարհներ փնտռել իր խնդիրների լուծման համար։

Կրկնուելով հաստատենք, որ անհրաժեշտ է այսօրուանից սկսել իրաւական, արժէքային ու բարոյահոգեբանական համակարգերի փոփոխութեան գործընթացը։

Եւ դարձեալ կրկնուենք ասելով, որ երէկուայ յեղափոխութեան եւ այսօրուայ պետական իշխանութեան առաջնորդի առջեւ ծառացած է առարկայական ու ենթակայական բարդութիւնների ծանր բեռ, որ կարելի է նաեւ բնորոշել որպէս՝ փորձութիւն իշխանութեամբ։

Այդ փորձութիւնը սկսուելու է գործադիր իշխանութեան ձեւաւորման քայլից, որն իրականացնելիս երկրի նոր ղեկավարը չի կարողանալու հաշուի չառնել գործօնը աշխատանքային խմբի եւ շարժման ընկերների, անցած քաղաքական կենսագրութեան ընկերների, դեռ գործող իշխանութեան մէջ եղած փորձառութիւն ունեցող մարդուժի, այսօրուայ ու վաղուայ գործակիցների եւ այլն։

Ամենաժողովրդավար կամ ոչ ժողովրդավար երկրներում էլ բարդ խնդիր է ղեկավարելը ու առաւել եւս արմատական բարեփոխումների ծրագրեր առաջադրելը, երբ խորհրդարանի եւ տեղական իշխանութեան մեծամասնութիւնը կազմում է իշխանութիւնից ընդդիմութեան դաշտն անցած ուժը։ Այս պայմաններում լուրջ հարց է դառնում անգամ նոր եւ առաւել օրինական վիճակ ստեղծելու նպատակով արտահերթ ընտրութիւնների համար ընտրական օրէնսգրքի փոփոխութիւնը։

Մասնակցելով հզօր շարժմանը կարելի է ասել, որ Հայաստանի իւրաքանչիւր քաղաքացի ունեցել է իր պատկերացումը վաղուայ փոփոխութիւնների վերաբերեալ եւ անհամբերութեամբ սպասելու է դրանց կենսագործմանը։ Զգացմունքային գրգիռները, որոնք ալեկոծում են յեղափոխականացուած զանգուածներին, նրանց քաղաքական առաջնահերթ պահանջն են դարձնում անօրինութիւնների ու թալանի հեղինակների պատիժը։ Ի՞նչ է արուելու պահանջի հարցում, որն այսօր գրեթէ բոլորի շուրթերին է։

Իւրաքանչիւր բարի նախաձեռնութեան դիմաց ծառանալու է մարդկային, նիւթական եւ այլ հնարաւորութիւնների խնդիրը։ Գտնուելու եւ մատնանշուելո՞ւ է այն ներուժը, որի միջոցով հնարաւոր է դառնալու այս կամ այն փոփոխութեան, նախաձեռնուող գործի իրականացումը։

Ներկայումս, երբ դեռ տաք է յեղափոխական տրամադրութիւնը եւ ընտրուած վարչապետը նոր-նոր պէտք է վարժուի իր գործառոյթներին, գուցէ թուայ, թէ վաղ է այս բաների մասին խօսելը։ Իրականում շատ խնդիրներ արդէն իսկ ներկայանալու են առանց դուռը թակելու եւ պահանջելու են անյետաձգելի լուծումներ։ Նոր էջը բացուած է եւ խանդավառութեանը փոխարինելու պէտք է գայ գործնական մտահոգութիւնը, օրակարգում երկրի ապագայի հարցն է։

ԱՐՏԱՇԷՍ ՇԱՀԲԱԶԵԱՆ
«Դրօշակ»

## Սուրիահայ Համայնքին Նուաճած Վստահութիւնը

Հայոց ցեղասպանութեան ոգեկոչական ձեռնարկներու նախօրէին, Սուրիոյ նախագահ տոքթ. Պաշշար Ասատ եւ Առաջին տիկին Ասմա Ասատ ընդունեցին Բերիոյ հայոց թեմի առաջնորդ Շահան արք. Սարգիսեանն ու Ազգ. վարչութեան եւ հայկական միութիւններու ներկայացուցիչները։

Նախագահը այս առիթով բարձրօրէն գնահատեց հայ համայնքին կառուցողական դերը՝ պատերազմի օրերուն Սուրիոյ դիմագրաւած ծանրագոյն դժուարութիւններու յաղթահարման մէջ։ Նախագահին խօսքն ու հանդիպումէն ետք հրապարակուած նախագահական պալատին հաղորդագրութիւնը քանի մը ուղերձ կը հաղորդէր։

Այցելութիւնը առիթ էր մօտէն ծանօթանալու Բերիոյ հայոց թեմի գործունէութեան եւ վերականգնումի ծրագիրներուն, մտահոգութիւններուն եւ առաջարկներուն։ Միւս կողմէ՝ Հայոց ցեղասպանութեան ոգեկոչական ձեռնարկներու նախօրէին նման հանդիպումի մը կազմակերպումն ու այս մանրամասնութիւնը նախագահական պալատի պաշտօնական հաղորդագրութեան մէջ արձանագրումը այլ բան չէր, եթէ ոչ՝ զօրակցութիւն հայ ժողովուրդին ու անոր արդար պահանջատիրութեան։

Այցելութեան երկրորդ շարժառիթը լուսարձակի տակ բերելն էր պատերազմի ընթացքին հայութեան, սուրիական հայրենիքի ընդհանուր շահերէն թելադրուած, հաւասարակշռուած մօտեցումն ու մշակութային, ուսումնակրթական, բարեսիրական աննահանջ գործունէութիւնը, յատկապէս՝ Հալէպ քաղաքի պատերազմական աղէտալի օրերուն։

Այս իմաստով նախագահը կը շեշտէր, որ՝ «Հայրենասիրութիւնը լոկ խօսքով չեն արտայայտեր։ Հայրենասիրութիւն կը նշանակէ՝ պատկանելիութեան զգացում, հայրենի հողի պաշտպանութիւն։ Կը նշանակէ, որ մեզմէ իւրաքանչիւրը իր ներդրումը բերէ ամենալաւ ձեւով՝ անկախ իր ազգային կամ ցեղային պատկանելիութենէն»։

Հանդիպումն ու կարծիքներու փոխանակումը հրաւէր մըն էր նաեւ նորովի թափով լծուելու վերականգնումի աշխատանքներուն, առաւել եւս բացուելու սուրիական միջավայրին՝ վերստին ծաղկեցնելու սուրիական բազմերանգ ընկերութիւնը։ Այս պատգամն էր, որ նախագահը կը յղէր, երբ կ՛ըսէր. «Մեր ներկայ մարտահրաւէրը ոչ թէ միայն պատերազմին պատճառով երկրին քանդուած ենթակառոյցները վերանորոգելն է, այլ վերակազմաւորելն է սուրիական ընկերութիւնը իր բազմաշերտ ու գունեղ հիւսուածքով։ Այս բազմազանութիւնն է, որ կը զատորոշէ սուրիական ընկերութիւնը այլ ընկերութիւններէ»։

Նախագահը սուրիական ընկերութեան զանազան շերտերու համարկումին, գործակցութեան անդրադառնալով՝ կարեւոր կը համարէր երկրի զարգացման գործընթացին մէջ քաղաքացիական հասարակութեան դերը, համաքաղաքացիներուն միջեւ գոյութիւն ունեցող տնտեսական, մշակութային, ուսումնակրթական, քաղաքական, ընկերային փոխյարաբերութիւններու զարգացման միջոցով։ Սա հրաւէր մըն էր հայ համայնքին՝ իր գործուն դերակատարութիւնը ունենալու քաղաքացիական հասարակութեան վերաձեւաւորման մէջ եւս։

«Հայ համայնքը փոքրամասնութիւն մը չէ այլեւս, ան անբաժան մասնիկն է սուրիական ընկերութեան», կ՚եզրափակէր նախագահը՝ նորարար ծրագիրներով միասնական աշխատանքի հրաւիրելով սուրիահայութիւնը, իսկ երկրէն մեկնող սուրիահայերուն վերադարձի կոչ ուղղելով։

Խմբագրական «Գանձասար»-ի

Տարածեցէք ձեր «Հորիզոն»ը
www.horizonweekly.ca

ԹՐՔԱՑԱԾ... Շար. էջ 5

յառաջդիմութիւն) սուր քննադատ։ Ան բուռն կերպով կը քննադատէր ղեկավար կուսակցութեան՝ պատերազմի մէջ մտնելու որոշումը եւ իր իսկ հայ քաղաքացիներուն նկատմամբ «պատերազմական յանցագործութիւններ ու ջարդեր» իրականացնելը։ Անոր խմբագրականներն ու հայերը պաշտպանող քաղաքական ելոյթները այնքան ազդեցիկ էին, որ փրօ-իթթիհատական մամուլը անոր «Արթին Քեմալ» (Արթինը հայկական անուն է, Յարութիւնի կրճատուած տարբերակը) կ՚անուանէր։

Պատերազմէն ետք, երբ Օսմանեան Կայսրութիւնը պարտութիւն կրեց, իթթիհատական առաջնորդները փախան երկրէն, սուլթանը նոր կառավարութիւն նշանակեց, եւ Քեմալը կարճ ժամանակի մը համար դարձաւ ներքին գործոց նախարար։ Քեմալ անխնայ կը պահանջէր դատապարտել ու պատժել իթթիհատական առաջնորդները։ Ան կը շարունակէր իր սուր քննադատութիւնը իթթիհատական առաջնորդներուն նկատմամբ ու հանդէս կու գար հայերուն իրաւունքներուն պաշտպանութեան դիրքերէն, այդ պատճառով իր անգլիացի կնոջ ու երեխաներուն անվտանգութենէն մեկնելով՝ զանոնք Անգլիա կը ղրկէ։ Ցաւօք սրտի, ալիքը իրեն դէմ կը շրջուի, երբ Աթաթուրք ապստամբութիւն կը յայտարարէ, Անգարայի իշխանութիւնը ձեռք կը ձգէ ու գահընկեց կ՚ընէ սուլթանը եւ Իսթանպուլի կառավարութիւնը։ Ալի Քեմալ Իսթանպուլի Թոքաթլեան պանդոկին մէջ կը ձերբակալուի։ Իսկ երբ զինք կը տանին Անգարա՝ դատելու, Աթաթուրքի հրամանատարներէն մէկը՝ «արիւնարբու» Նուրըտտին փաշան (անոր արիւնարբու կը կոչէին իր կարմիր մօրուքին, ինչպէս նաեւ խիստ դաժանութեան համար), կը պատուիրէ իր զինուորներուն լինչի դատաստան տեսնել Քեմալի նկատմամբ, ու անոր ողջ վիճակով մաս առ մաս կը կտրեն։

Քեմալի ընտանիքը բնակութիւն կը հաստատէ Բրիտանիոյ մէջ։ Անոր մեծ թոռը Պորիս Ճոնսընն է, որ եղած է Լոնտոնի քաղաքապետ, իսկ հիմա արտաքին գործոց նախարարն է։ Որպէս հմուտ դիւանագէտ՝ Ճոնսըն Թուրքիոյ նախագահ Էրտողանին շարունակ կ՚ըսէ, որ Մեծն Բրիտանիան կարելի ամէն բան պիտի ընէ, որ Թուրքիան անդամ դառնայ Եւրոպական Միութեան, բայց միաժամանակ կը պաշտպանէ Պրեքսիթը (Միացեալ Թագաւորութեան հեռացումը Եւրոպական Միութենէն — Ակունքի խմբ.)՝ պնդելով, որ եթէ Թուրքիա մտնէ ԵՄ, Անգլիան կ՛ողողուի թուրք գաղթականներով։

Թերեւս այս քաղաքականութիւնը ծիծաղելի կը թուէր, եթէ այս պատմութիւնները այդքան ալ ողբերգական չըլլային։

# ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

## ԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

Բ. ՏԱՐԻ ԹԻՒ 7
ՅՈՒՆԻՍ
JUNE | JUIN
Year 2 | Année 2
No. 7 - 2018


ԱՌԱՋՆՈՐԴԻ ԽՕՍՔ

## ԳՆԵՑԷ՛Ք ԺԱՄԱՆԱԿԸ



ԲԱԲԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ՝
Գանատայի Հայոց Թեմի



Կրօնական արարողութիւններուն մասնակցիլը իւրաքանչիւր մարդուն համար ալ անհրաժեշտ է եւ օգտակար: Աստուծոյ տան մէջ հաւաքական աղօթքներուն մասնակցիլը հաւատացեալ մարդուն պարտաւորութիւնն է:

Այսօր, ականատես ենք երկու տարբեր տեսակ մարդոց խումբերու. խումբ մը՝ պարտաճանաչ ու մասնակից, իսկ այլ խումբ մը, իր պարտաւորութիւններուն մէջ թերացող: Երկրորդ խումբին պատկանող մարդիկ կը պատճառաբանեն թէ միշտ զբաղած են, ամբողջ շաբաթը կ'աշխատին, օր մը հանգիստի պէտք ունին, եւ հետեւաբար հարցը լուծուած համարելով՝ սովորական խօսք մը, որպէս յանկերգ կը կրկնեն. «ԺԱՄԱՆԱԿ ՉՈՒՆԻՆՔ»:

Բայց եկէ՛ք, «ծուռ նստինք եւ շիտակ խօսինք». ո՞ր բազմազբաղ մարդն է, որ օրուան կամ շաբթուան աւարտին չկարողանայ իր սուղ ժամանակէն յատկացնել իր Աստուծոյ. ո՛ր բազմազբաղ մարդն է, որ շաբթուայ աւարտին իր աշխատանքէն ձերբազատուած, չի կրնար պահ մը մտածել ու խօսիլ իր Աստուծոյ հետ, որպէսզի Ան օրհնէ, յաջողութիւն շնորհէ իր աշխատանքներուն, եւ մանաւանդ երկնքի արքայութեան արժանի չդարձնէ ներկայ դառնաղէտ կեանքի յոգնութիւններէն եւ տառապանքներէն ետք:

Գիտեմ՝ դարձեալ պիտի պատճառաբանէք, որ մեր եկեղեցւոյ արարողութիւնները երկար են, Ս. Պատարագը երկար է «ժամանակ չունինք»: Սակայն, ների՛ք, ուրիշները ինչպէ՞ս ժամանակ ունին՝ զբաղուած չե՞ն: Գուցէ ձեզմէ ալ աւելի զբաղուած են, բայց երբեք չեն թերանար իրենց պարտաւորութիւններուն մէջ:

«կարենալու» հետեւաբար «կամենալու» մէջ է. այսինքն ե՛ւ կամենալու ե՛ւ կարենալու...

Պարզապէս, ո՛չ թէ ժամանակ չունինք, այլ կրօնական կեանքին ու հոգեւոր ապրումներուն կարեւորութիւն չենք ուզեր տալ:

Արդ, ամենէն առաջ հոգ տանինք հոգիի սնուցման, հոգեւոր կեանքի հարստացման: Հոգիով է, որ մարդը մարդ կը դառնայ եւ կը զանազանուի կենդանիներէն:

Գտնենք ժամանակը, ԳՆԵ՛ՆՔ ԱՅԴ ԺԱՄԱՆԱԿԸ, որքա՛ն ալ որ այն սուղ ըլլայ մեզի համար:

## ԴԱՍԵՐ՝ ՃՇՄԱՐԻՏ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿԵԱՆՔ ԱՊՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

### ՆԱԽԱՆՁ ԵՒ ՄՐՑԱԿՑՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԵՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Բարի է ամէն ինչ, որ ստեղծեց Աստուած. բարի է ե՛ւ կինը, ե՛ւ կերակուրը, ե՛ւ գինին, որովհետեւ առաջինը մայրն է եւ պարգեւատուն կեանքի, երկրորդը կը սնուցանէ եւ կը պահէ մեր մարմինը, իսկ երրորդը կը քաղցրացնէ եւ կը հաճոյացնէ մեզ: Հապա ինչո՞ւ են այնքա՜ն դատապարտութիւնները, հարց տրուի թերեւս: Ո՛վ մարդ, Աստուած այս բնութիւնը չէ որ պախարակեց, այլ՝ գործերը: Ան չըսաւ կինը պիղծ է եւ գարշելի, այլ ըսաւ՝ մի՛ շնար: Ան չըսաւ գինին չար է, այլ՝ արբեցողներուն եւ որովայնամոլներուն աքսորեց արքայութենէն: Ան չըսաւ գէշ է եւ անպիտան երկաթը կամ դարբնութեան արուեստը, այլ դատապարտեց մարդասպանը: Աստուած զերծ է բամբասանքէն եւ Անոր ստեղծածներուն մէջ բնութեամբ պիղծ չկայ:

Փառաւորենք զԱստուած ո՛չ միայն խօսքով, այլ՝ գործով, ո՛չ լոկ գործով, այլ՝ ուղիղ հաւատքով, եւ ո՛չ միայն հաւատքով, այլ՝ յոյսով, սիրով, խոնարհութեամբ, հեզութեամբ եւ առաքինութեան բոլոր մասերով: Ահա ասոնցմով է որ կը փառաւորուի Հայրը. եւ երբ փառաւորենք Հայրը, կը փառաւորուին նաեւ Որդին եւ Սուրբ Հոգին, որովհետեւ ինչպէս որ ուրիշ ամէն բանով միեւնոյնն են եւ չեն բաժնուիր ո՛չ բնութեամբ, ո՛չ էութեամբ, ո՛չ աստուածութեամբ, ո՛չ զօրութեամբ, բայց միայն անձնաւորութեամբ, նոյնպէս են նաեւ փառքով: Ա՛րդ, փառաւորենք զԱստուած, որպէսզի Ան եւս յարմար ժամանակին տոկոսով վարձատրէ եւ երկնային բարիքներուն արժանացնէ մեզ բոլորս:

Ոմանք միայն գեհենի կրակէն կը վախնան, իսկ ուրիշներ կը սարսափին տանջանքներէն, բայց ես կը զարհուրիմ, կը դողամ, կու լամ եւ մեծապէս կը հառաչեմ միայն այն ժամանակ, երբ Աստուծոյ սէրը կորսնցնեմ եւ Անոր քաղցր դէմքը չտեսնեմ եւ երանաւէտ ձայնը չլսեմ: Գալով տանջանքներուն, նոյնիսկ եթէ արքայութիւն մտնեմ եւ բոլոր փառքերը ժառանգեմ եւ սակայն չկարենամ զԱյն տեսնել, դժոխքէն աւելի չար պիտի համարէի այդ հանգիստը, իսկ եթէ դժոխք մտնէի եւ այնտեղ զԱստուած տեսնէի ու Անոր սէրը վայելէի, տանջանքը ոչ մէկ բան չէի համարեր, այլ արքայութիւնէն աւելի պատուական կը նկատէի:

*Սարգիս Շնորհալի*

## ՃԻՇԴԸ ԳԻՏՆԱՆՔ

### Ի՞ՆՉ Է ՈՂՋՈՅՆԸ

Ս. Պատարագի ընթացքին, երբ սարկաւագը կը ձայնէ «Ողջո՛յն տուք միմեանց», պատարագիչը կէս չափ Ս. Սկիհին վրայի ծածկոցը կը բանայ եւ դուրս կը քաշէ նշխարը եւ ձեռնամած մէկ կողմ կը կանգնի այսպէս խորհրդանշելով Քրիստոսի կուսական Սուրբ Ծնունդը եւ Յայտնութիւնը: Այդ ժամանակ քահանայից դասը կամ սարկաւագը ատեան կու գան՝ ողջոյնն առնելու համար, որ կը խորհրդանշէ հովիւներուն մինչեւ Բեթղեհէմ երթալը, որոնք կ'ըսէին. «Եկէ՛ք Բեթղեհէմ երթանք եւ տեսնենք պատահածը, այն ինչ որ Տէրը մեզ յայտնեց» (Ղկ 2.15): Նոյնպէս ալ կը խորհրդանշէ աստղը տեսնելով մոգերուն Արեւելքէն գալը Քրիստոսի երկրպագելու համար: Բուրվառակիր սարկաւագը ողջոյնը տալու համար խորանէն վար կ'իջնէ եւ կ'աւետէ բարի լուրը ըսելով, «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ», ինչպէս որ հրեշտակը հովիւներուն աւետեց Փրկչին ծնունդի մասին (Ղկ 2.10-11): Քահանայից դասը կամ սարկաւագը, իրենց կարգին, կը յայտարարեն Քրիստոսի այս անճառելի յայտնութիւնը, ինչպէս որ հովիւներն ու մոգերը ամբողջ աշխարհին յայտնեցին Քրիստոսի հրաշափառ ծնունդի մասին: Դպիրները այդ պահուն ուրախութեամբ կը հնչեցնեն «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ» երգը:

Եկեղեցւոյ մէջ հաւաքուած բազմութիւնը, պատարագիչէն մինչեւ ամենափոքր հաւատացեալը, Քրիստոսի յայտնութեան այս հաւատքով, յոյսով ու սիրով իրար միացած, մէկ անձ եղած՝ մէկ անգամ եւս կ'իրականացնեն քրիստոնէական առաջին համայնքի այն նախանձելի վիճակը, թէ՝ «Հաւատացեալներու ամբողջ բազմութիւնը մէկ սիրտ ու մէկ հոգի էր» (Գրծ 4.32): Այս միջոցին ամէն մարդ իր շուրջը գտնուող հաւատացեալներուն հետ խաղաղութեան համբոյրն է որ կը փոխանակէ: Իսկ եթէ ոմանք որեւէ բանի համար իրարմէ նեղուած են, եւ տակաւին չեն հաշտուած՝ այդ միջոցին պէտք է հաշտուին իրարու հետ, Քրիստոսի այն խօսքին համաձայն՝ թէ «Եթէ զոհասեղանին վրայ քու ընծադ Աստուծոյ մատուցելու ժամանակ յիշես, թէ եղբայրդ վշտացած է քեզմէ, քու ընծադ զոհասեղանին առջեւ ձգէ, գնա՛ նախ հաշտուիր եղբօրդ հետ, եւ ապա եկո՛ւ քու ընծադ մատուցի՛ր Աստուծոյ» (Մտ 5.23-24):




## ՀՈԳԵՒՈՐ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ



ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

# ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ



Առաքինութիւն կը կոչուի մարդուն մէջ բարի այն յատկութիւնը, որով ան Աստուծոյ պատուիրաններուն համաձայն կը վարուի մտքով, խօսքով կամ գործով, եւ չի մեղանչեր:

Ըստ մեր հայրերուն, առաքինութիւնը կ՚իրագործուի միայն Աստուծոյ պարգեւած շնորհքներով. թէեւ այս բառը կը գործածուի նաեւ ոչ հոգեւոր իմաստներով՝ ինչպէս կարելի է բացատրել որպէս բարեխղճութիւն, հայրենասիրութիւն, ազնուութիւն եւ այլն. սակայն անոնցմով օժտուած մարդը դեռեւս կարելի չէ կոչել առաքինի, եթէ անոր մօտ այդ բոլորը հիմնուած չէ Աստուծոյ հանդէպ ունեցած սիրոյն եւ վստահութեան վրայ:

Ուստի առաքինութիւններու սկիզբը հաւատքն է ճշմարիտ, ուղղափառ հաւատքը Աստուծոյ եւ Անոր խօսքին նկատմամբ:

**Առաքինութիւնները կը բաժնուին երեք խումբի:**

ա) Աստուածային առաքինութիւններ, որոնք կը վերաբերին Աստուծոյ, անոնք են հաւատքը, յոյսը եւ սէրը:

բ) Մարդկային առաքինութիւններ, որոնք կ՚իրագործուին սեփական անձի եւ հարազատներու հանդէպ, որոնք են խոհեմութիւնը, ժուժկալութիւնը, ողջախոհութիւնը եւ արդարութիւնը:

գ) Ստացական առաքինութիւններ, որոնք բազմաթիւ են, սակայն ըստ էութեան կ՚ամփոփուին հետեւեալներուն մէջ՝ աղօթք, պահք եւ ողորմութիւն: Աղօթքը կ՚արտայայտէ մարդուն պարտաւորութիւնները Աստուծոյ հանդէպ, պահքը՝ սեփական անձի, իսկ ողորմութիւնը՝ հարազատի:



ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

# ԺԱՄԱՆԱԿԸ ԾԱԽՈՒ ԱՌՆԵՆՔ



Օր մը, հանրային պարտէզին մէջ, կին մը մարդու մը քով նստեցաւ խաղավայրին մօտ գտնուող նստարաններէն մէկուն վրայ: «Այդ իմ տղաս է» ըսաւ ան, ցոյց տալով կարմիր շապիկով տղեկը, որ սահնակէն վար կը սահէր ուրախութեամբ:

«Անուշիկ տղեկ մըն է». ըսաւ մարդը: «Այդ ալ ի՛մ տղաս է, որ օրօրոցին վրայ կ՚օրօրուի, կապոյտ շապիկ հագած է»: Ապա ժամացոյցին նայելով ձայնեց տղուն ըսելով: «Յակոբ, տուն երթալու ժամանակն է»:

Տղեկը աղերսեց. «Հայրիկ, հինգ վայրկեան եւս: Հաճիս, քիչ մը դեռ խաղամ, միայն հինգ վայրկեան աւելի»: Մարդը գլուխով հաւանութիւն տուաւ, եւ Յակոբը շարունակեց գոհունակութեամբ օրօրուիլ:

Մի քանի վայրկեան անցաւ եւ հայրը ոտքի ելաւ ու դարձեալ ձայն տուաւ տղուն. «Ժամանակն է որ երթանք»: Յակոբ նորէն աղերսեց. «Հինգ վայրկեան եւս, հայրիկ, միայն հինգ վայրկեան դեռ»: Մարդը ժպտաց եւ ըսաւ. «Շատ լաւ»:

-Ո՛հ իրապէս համբերատար հայր մըն էք, ըսաւ նստարանին վրայ նստող կինը:

Մարդը ժպտեցաւ եւ ապա պատասխանեց. «Մեծ տղաս՝ Կարօն, գինով վարորդի մը պատճառով, անցեալ տարի հոսկէ քիչ անդին արկածով սպաննուեցաւ: Կարոյին հետ շատ ժամանակ չէի անցուցած: Հիմա պատրաստ եմ որեւէ բան տալու իրեն, միայն հինգ վայրկեան հետը անցընելու. բայց ալ ուշ է: Ուստի, ուխտած եմ նոյն սխալը դարձեալ չընել Յակոբին հետ: Ան կը խորհի որ օրօրուելու համար հինգ վայրկեան եւս ունի, մինչդեռ ես հինգ վայրկեան աւելի ունիմ իր խաղը դիտելու…»:

Սիրելիներ,

Որպէս հայրեր, մեր զաւակները որեւէ բանէ աւելի մեր ժամանակին եւ ուշադրութեան պէտքը ունին: Աշխարհի մէջ մեզի բոլոր տրուածները պիտի գան ու երթան, սակայն միակ բանը որ պիտի մնայ, մեր զաւակներուն մէջ դրուած, դաստիարակութիւնն է՝ Հաւատքը, Սէրը եւ մեր նուիրումը: «Ուստի ժամանակը ծախու առնենք, վասնզի օրերը չար են» (Եփ 5.16):

*Հրահատ*

## ՍՈՒՐԲԵՐԸ ԵՒ ՄԵՆՔ

# ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Մեր եկեղեցական օրացոյցին համաձայն, այս ամիս պիտի նշենք մեր հաւատքի Հօր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի Խոր Վիրապէն ելլելու յիշատակը: Գրիգոր Լուսաւորիչ Տրդատ հեթանոս թագաւորին զօրքին մէջ քրիստոնեայ զինուոր մըն էր, որ մերժելով հեթանոսական զոհ մատուցանելու հրամանը, կ՚ենթարկուի զանազան չարչարանքներու, եւ ապա գուբի մը մէջ նետուելով մահուան կը դատապարտուի:

13 տարիներ ետք, երբ Տրդատ թագաւոր սպաննել կու տայ Հռիփսիմեանց՝ 40 կոյսերը, ծանր հիւանդութեամբ մը կը տառապի: Իր քոյրը Խոսրովիդուխտ քանիցս երազով կը տեսնէ, թէ միայն Գրիգոր կրնայ բուժել թագաւորը: Գրիգոր մահացած չէր. ըստ աւանդութեան հրեշտակ մը ամէն օր կ՚այցելէր եւ կը կերակրէր զինք, որով Գրիգոր կենդանի մնացած էր: Ան աղօթական կեանք ապրելով, Աստուածային զօրութեամբ հրաշքով ողջ մնացած էր:

Վիրապէն ելլելէն ետք, Սուրբ Գրիգոր Լուսաւորչի առաջին գործը կ՚ըլլայ, թաղել կոյսերուն չթաղուած մարմինները. ապա կը բժշկէ թագաւորը եւ կը սկսի քարոզել Քրիստոսի մասին: Քրիստոնէութիւնը պետական կրօնք կը հռչակուի, մեհեանները կը քանդուին եւ անոնց փոխարէն տաճարներ ու եկեղեցիներ կը կառուցուին, որոնցմէ մէկն է Սուրբ Էջմիածինը:

*Գարեգին Վրդ. Շխրտմեան*
*Հոգեւոր Հովիւ*
*Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ*



## ԱՂՕԹՔ

Ո՜վ Տէր, ընդունէ՛ մեր պաղատանքը, Դուն, որ առատաձեռն ես, Քու բարի պարգեւներովդ ողորմէ ամբողջ աշխարհին՝ հիւանդներուն, կարիքաւորներուն եւ քեզի ապաւինողներուն, որովհետեւ Դուն գիտես մեր պէտքերը եւ կարիքները մեր խնդրածէն եւ հասկցածէն աւելի: Ամէն:

## MESSAGE DU PRÉLAT

### ACHETER DU TEMPS

Les cérémonies religieuses sont essentielles et bénéfiques pour tous. Se rassembler afin de prier dans la maison de Dieu est toutefois aussi un engagement pour chaque croyant.

Nous pouvons voir œuvrer dans le monde deux types de personnes aujourd'hui : l'un appartient à un groupe de participants fervents, alors que l'autre ne réussit pas à tenir son engagement envers Dieu. Les gens dans le deuxième groupe, presque quatre-vingt-dix pour cent d'entre eux, vous diront qu'ils sont constamment occupés, qu'ayant travaillé toute la semaine ils n'ont qu'un seul jour de repos et, croyant leur justification faite, répètent ces mots de nouveau : « JE N'AI PAS LE TEMPS! »

Parlons franchement : quel genre de personne si occupée n'a-t-elle pas un peu de temps à consacrer à son Seigneur? Cette personne occupée qui, vers la fin de sa semaine, libérée de son travail, ne peut même pas prendre un petit instant pour penser et communiquer avec son Seigneur pour qu'Il puisse bénir ce même travail avec du succès et, surtout, pour que cette personne devienne digne du Royaume des Cieux après les souffrances et les épreuves de la vie contemporaine au rythme trop rapide.

Je le sais… vous me direz encore que notre messe est trop longue… « On n'a pas le temps. »

Mais… comment se fait-il que d'autres en aient pour aller à l'église? Peut-être qu'ils sont plus impliqués que vous ne l'êtes. Ou, plus simplement, peut-être parce qu'ils veulent respecter leurs engagements.

Donc la raison n'est pas « pouvoir », mais plutôt « vouloir »… Ce n'est pas que nous n'avons pas le temps, mais plutôt que nous ne voulons pas octroyer de l'importance à la vie religieuse et aux émotions spirituelles qui peuvent se dévoiler à nous.

Dès lors, prenez bien soin de l'enrichissement de votre vie spirituelle, car ce n'est que par l'Esprit que nous sommes différents des animaux.

Donc, trouvez du temps, ACHETEZ CE TEMPS, qu'importe ce qu'il coûte.

## WESTERN ONES, WESTERN CHURCHES

### TO BUY TIME

Religious ceremonies are necessary and beneficial for everyone. Congregating to pray inside God's house is certainly a commitment for every believer.

Today, we can witness two different kinds of people: one belongs to a group of steadfast participants, while the other fails to fulfill its commitment towards God. People in the second group, usually ninety percent of them, argue that they are always busy, working the whole week, having only a single day to rest, and, thinking that they have thus excused themselves, keep repeating the same words again and again, "I DON'T HAVE THE TIME!"

But the fact of the matter is, what kind of a busy person does not have some time to dedicate to their Lord? This busy person who, at the end of the week, freed from their work, cannot take a single moment to think and communicate with their Lord so that He may bless and grace their work with success and, especially, so that they may become worthy of the Kingdom of Heaven after the sufferings and hardships of such a fast-paced life.

I know... you will say once again that our church ceremonies are too long, our liturgy is too long…

"We don't have time." However... how is it that others do have the time to come to church? Perhaps they are more involved than you are – or, simply, they never fail to meet their obligations.

So, the reason is "want" rather than "can"...

It is not that we do not have the time, rather we do not want to give importance to religious life and to the emotions that can arise from spirituality.

Then, firstly, make sure to take care of the soul, to pay attention to the enrichment of your spiritual life. For it is by the Spirit that we are distinct from animals.

Therefore, find the time, BUY THIS TIME, no matter how costly it may be.

### VESTMENTS OF BISHOP



Emiporon (Palllium) is worn as part of the vestment of the Divine Liturgy. It is a long riband with a width of about nine inches and a length of about thirteen or fourteen feet, made of fine rich material, often with embroidered ornaments on it. It is wrapped round the shoulders with buttons and loops in such a way that one end hangs in front down to the ankles, and the other end hangs at the back again down to the ankles. There are four crosses, usually embroidered, on the omophorion: one on either shoulder, one on the front part and one on the part that hangs at the back. It represents the fullness of Episcopal authority.

Ardakhoorag (Infulae or Fanons) are lappets three inches wide and twelve to fourteen inches long, which are hung from the lower edge of the Vagas about six inches away from the centre on either side. They are made of the same material and colour as the Vagas. Usually three tassels are attached to the lower end and it is worn with the Khouyr (Mitre).

Khouyr (Mitre) is worn as part of the vestment of the Divine Liturgy. It has two stiff flexible oblong pieces, each having the shape of a pointed arch at the upper end, are sewn together at the lower half of the sides, which when pressed, open at the base and placed on the head. It symbolises the "helmet of salvation".

Madani (Ring) is a ring with a large precious stone, often amethyst, sometimes surrounded by small diamonds, worn by bishops, an insignia of their Episcopal administrative authority and granted to them at their consecration. Bishops used to seal documents with their rings.

Banageh (Enkolpion) is an oval medallion with the figure of the Holy Virgin and the Child Jesus represented on it and surrounded by a frame studded with precious stones and suspended with a chain from the neck on the chest. It is an Episcopal decoration granted by the Patriarch-Catholicos to all bishops after their consecration.

Kavazan Hovagan (Pastoral Staff or Pedum) is a rod, often of metal, sometimes of wood, about five feet six inches long, crooked at the top end and sometimes with a knob at the base of the crooked part. It is ornamented in various ways. It is a symbol of Episcopal authority over the flock. It is used during the Liturgy and other solemn services.

Kavazan Vartabedagan (Doctoral Staff or Crocia) is a rod, often of metal, sometimes of wood, having the same length as the pastoral staff, and in the form of tau cross, like the letter T. Very often the arms of the cross thus formed are so made as to represent two serpents facing each other. Sometimes there is a globe, with a small cross on it, on top of the rod where the two serpents branch off. The rod is used by priests or prelates having the doctor's rank. It may also be used by bishops. It is a symbol of teaching authority, the serpents representing wisdom, directed toward the world.

Asa (Staff or Ferula) is a rod of wood shorter than the other staffs, with a metal knob on top. It is carried by bishops as a walking stick and is not used during the Liturgy or the services.

## ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ

### ԱՆ ԵԿԱԾ Է



Տէր Յիսուս օր մը կնոջ խօսեցաւ, որ եկած էր այն ջրհորէն ջուր տանելու, որուն քով Ինք նստած էր: Կինը շատ սխալ բաներ ըրած էր եւ ուրախ չէր: Երբ Տէր Յիսուս անոր ըսաւ թէ՝ Ինք կրնար Կենաց Ջուր տալ, կինը չհասկցաւ թէ Յիսուս յաւիտենական կեանքի համար կ'ըսէր: Յիսուս կնկան պատմեց անոր անցեալ կեանքը: Որքան զարմացաւ կինը, լսելով որ Յիսուս իր պատմութիւնը ճիշտ գիտէ:

Կինը Յիսուսի ըսաւ. «Երբ Մեսիան գայ, մարդիկը մեղքերէն փրկելու, Ան պիտի մեզի ամէն բան ըսէ»: Յետոյ Յիսուս յայտնեց թէ Ինքն էր Մեսիան, Ինք էր մարգարէութեան իրականացումը:

Կինը հաւատաց Տէր Յիսուսին: Անմիջապէս գնաց իր բարեկամներուն պատմեց: Անոնք եկան եւ մտիկ ըրին Տէր Յիսուսի խօսքերը:

Անոնք Անոր հաւատացին (Յհ.4:41-42): Անոնք հասկցան թէ Մեսիան եկած էր:

Find the hidden pictures above in the puzzle.




Jesus met a Samaritan woman and told her good news.

READ THE STORY IN JOHN 4

Գանատայի Հայոց Թեմի Կիրակնօրեայ Դպրոցներու նպատակն է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ դաւանութեան եւ աւանդութեան համաձայն՝ մեր մանուկներուն եւ պատանիներուն ջամբել կրօնական դաստիարակութիւն եւ եկեղեցւոյ վերաբերեալ գիտելիքներ եւ ծանօթութիւններ:



Ձեր զաւակները Կիրակնօրեայ Դպրոց արձանագրելու համար, կրնաք հեռաձայնել ձեր շրջանի եկեղեցիներու գրասենեակները:

Կիրակնօրեայ Դպրոցի ժամերն են՝ Կիրակի առաւօտները ժամը 10:30-1:00:

# ՌՒՍԱՒՈՐԻՉ

## ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

### ԵԿԵՂԵՑԻԻՆ ՄԷՋ ԳՈՐԾԱԾՈՒՈՂ ԳԻՐՔԵՐ

Եկեղեցական սրբազան խորհուրդները կատարելու համար կը գործածուին յատուկ գիրքեր:

**Աստուածաշունչ.** Սուրբ Գիրքն է, որ կը բովանդակէ Աստուծոյ խօսքը՝ Քրիստոսի երկրաւոր կեանքէն առաջ, Քրիստոսով ըսուած և Իրմէ վերջ ըսուած Առաքեալներու կողմէ:

**Ժամագիրք.** կը բովանդակէ եօթը ժամերգութիւններուն կարգը, աստուածպաշտութեան վերաբերեալ աղօթքներ, մաղթանքներ, քարոզներ եւ երգեր:

**Շարակնոց.** ժամերգութիւններու ընթացքին երգուող բոլոր հոգեւոր երգերը՝ շարականները պարունակող: Շարականները չորս մասի կը բաժնուին. Տէրունական, Սրբոց, Ապաշխարութեան եւ Հանգստեան: Ասոնք կ'երգուին ութ ձայն-եղանակներով:

**Ճաշոց.** կը բովանդակէ օրուան յատուկ ընթերցուածները եւ Աւետարանները՝ Հին եւ Նոր Ուխտերէն:

**Խորհրդատետր, Պատարագամատոյց.** Որուն մէջ դասաւորուած են Ս. Պատարագի ընթացքին կարդացուելիք աղօթքները:
Տօնացոյց. ցոյց կու տայ տօներուն շարքը եւ անոնց ընթացքին տեղի ունենալիք արարողութիւնները:

**Մաշտոց.** Ծիսարան ալ կը կոչուի: Անոր մէջ գրուած են Հայ Եկեղեցւոյ Ս. Խորհուրդները եւ հոգեւոր ծէսերը կատարելու կարգերն ու կանոնները: Ս. Մեսրոպի անունով Մաշտոց կը կոչուի:

**Կանոնագիրք.** որուն մէջ կան առաքելական, երեք Տիեզերական Ժողովներու, ինչպէս նաեւ հայ եկեղեցական ժողովներու կանոնները:
Տաղարան. կը բովանդակէ Շարակնոցէն դուրս գտնուող բազմաթիւ հոգեւոր երգեր:

**Յայսմաւուրք.** սուրբերու օրինակելի վարքն ու բարքը կը պատմէ:

**Նարեկ.** Ս. Գրիգոր Նարեկացիին «Մատեան Ողբերգութեան» աղօթագիրքն է:




## ՅՈՒՆԻՍ 2018

| Երկուշաբթի | Երեքշաբթի | Չորեքշաբթի | Հինգշաբթի | Ուրբաթ | Շաբաթ | Կիրակի |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | 1 | 2 | 3 |
| 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 |
| 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 |
| 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | |
| | | | | | | |

Յունիս 2
Ս. Գրիգոր Լուսաւորիչի Ելքը Վիրապէն

Յունիս 3
Տօն Ս. Էջմիածնի

Յունիս 16
Գիւտ Ս. Գրիգոր Լուսաւորիչի Նշխարներու

Յունիս 17
Հայրերու Օր

Յունիս 21
Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ

Յունիս 24
Ազգային Տօն (Քէպէք)



## ՀՈԳԵՒՈՐ ԽՕՍՔ

«Որովհետեւ մեղքին վարձատրութիւնը մահ է, մինչ Աստուած որպէս ձրի պարգեւ՝ յաւիտենական կեանք կու տայ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ»: Հռ 6:23


SOURP KEVORK ARMENIAN CHURCH OF LAVAL PRESENTS
Ս. Գէորգ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին
կը Ներկայացնէ
TRIKTRAK.CA
Armenian radio
Festival Arménien de Laval 2018
20ème anniversaire
PIERE CHAMASSIAN
FRIDAY JUNE 22
Doors Opens at 7pm
Tickets 30$
DJ
Chris24
DJ Friday, Saturday & Sunday
ELI BERBERIAN & BAND
SUPER SAKO
SATURDAY JUNE 23
Doors Open at 5pm
6-12: 10$
12+: 20$
SURO
Doors Open at 3pm
6-12: 5$, 12+: 10$
SUNDAY JUNE 24
With The Participation of
ANI DANCE ENSEMBLE
DJ SAMMY FLASH
SETO ROYAN
JOELLE
Performance Starts at 5pm
FRIDAY NIGHT
POKER TOURNAMENT
Registration at 6pm
• BUY-IN $120
• CASH PRIZES
• OPEN BAR
• OPEN BUFFET
• PRO DEALERS
Info & Friday Night Tickets
ADMIN: 450-688-6795
LENA APRAHAMIAN: 514-928-9910
2865 BOUL. SOUVENIR, LAVAL QC.
@Festivalarmenien
@ festivalarmenien
Zone Desjardins
ACCESS TO GAMES & BALLOONS
SATURDAY & SUNDAY
AROUCH
Délices des cèdres
VREJ HADIDIAN
Desjardins
Caisse de Chomedey
Allstate
Amir
ARMENIA STRONG
SECOND CUP COFFEE CO.
Target Shooting
Delivoni
ECOLE DE CONDUITE OMEGA

Կազմակերպութեամբ՝

Հ.Յ.Դ. ՄԻՀՐԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ եւ ՍԱՐԳԻՍ ԶԷՅԹԼԵԱՆ ԿՈՄԻՏԷՈՒԹԵԱՆՑ

Հայաստանի Հանրապետութեան 100 ամեակ



# ԱԶԳԱՅԻՆ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ ՓԱՌԱՏՕՆ-ԽՐԱԽՃԱՆՔ



ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝

Հայրենիքէն հրաւիրուած սիրուած երգիչներ



ԳՈՀԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԱՂԱՍԻ ԻՍՊԻՐԵԱՆ

**ՈՒՐԲԱԹ, 8 ՅՈՒՆԻՍ ժամը 8:30-ին**

Centre Arménie, 1025, boul. Elisabeth, Laval, Québec

**Մուտքի նուէր՝ $25.00 աղանդերներ ներառեալ**

Հայ Դատի տուրքը ներառեալ

Տոմսերու համար հեռաձայնել՝

Տիկ. Յասմիկ Պիլէմճեանի (514) 831-4755 Տիկ. Զաւարթ Տատաղեանի (514) 582-4480

CARROSSERIE AUTO ST-MICHEL
625, rue du Bois, St-Eustache
514 927-3826

GREGOIRE

OMEGA
École de conduite
Driving School Inc.
514-747-7883
450-688-4245

Carrosserie Prisme
450-987-3948

CARROSSERIE
JACOB & JACOB
BODY SHOP
Tél.: (514) 484-7945

TLC Global

HARRY
AUTO GLASS
& SEAT COVER
Tél. : (514) 487-0691




ԲԱԲԵԼՈՆ BABYLON
RESTAURANT

BABYLON

NOW OPEN

YEREVAN | ARMENIA

91 PAVSTOS BUZAND STREET

TEL: +374 93 588885 | +374 60 488884 | E-MAIL: babylon.armenia@gmail.com

**Pharmacie Levon Benohanian et Mher Koubelian Inc.**
Pharmaciens-propriétaires

3915, Boulevard Samson
Laval, QC H7W 2G1

Proxim

T 450 688-4111
F 450 681-5525
proximlaval@gmail.com

Lun. au vend. : 8h30 à 21h
Sam. et dim. : 9h à 17h

Infirmière (jeudi) : 8h30 à 15h



Անվճար սպասարկութիւն մինչեւ ձեր տունը.
Շաբաթական դեղատուփիկի պատրաստութիւն.
Ազատ փոխադրում ձեր դեղացանկի (dossier)
այլ դեղարանէ. Կրիպի պատուաստում
(vaccination) հիւանդապահի կողմէ.

**Բուժական հետեւում՝**
արեան բարակութեան (INR), շնչերակային
ճնշման (tension artérielle), արեան շաքարի
(glycémie capillaire), արեան մաղձաճարպի
(cholesterol), եւն.




12300 boul. Laurentien (angle boul. Gouin) Montréal H4K 2Z6
514-335-1881 • www.manoirgouin.com • location@manoirgouin.com

# ARMENIAN HERITAGE CRUISE® 2019

January 20-27, 2019 • Miami • Roatan • Costa Maya • Nassau • Cozumel



KEVORK ARTINIAN

KHATCHIG JINGIRIAN

HAROUT PAMBOUKJIAN

www.armenianheritagecruise.com




| | |
|---|---|
| INSIDE CABIN | [illegible] |
| CENTRAL PARK VIEW | [illegible] |
| OCEAN VIEW | [illegible] |
| CENTRAL PARK BALCONY | [illegible] |
| BOARDWALK BALCONY | $1,359 |
| OCEAN VIEW BALCONY | $1,524 |
| [illegible] SUITES | [illegible] |
| GRAND SUITES | [illegible] |

TRAVELGROUP INTERNATIONAL

Call Arpi Bostajian-Ashkarian (519) 748-2872 – arpi@bostgroup.ca

# Ներգաղթի Դասը՝ Հայրենադարձութեան Յաջողութեան Մեկնակէտ

*Հայաստան բնակութիւն կը հաստատեն «սփիւռքահայեր», ոչ միայն՝ Իրաքէն կամ Սուրիայէն հայրենադարձներ, որոնք ապահովութեան ապաստան կը փնտռեն: Կան նաեւ Ամերիկայէն, Լիբանանէն, կամ այլ երկիրներէ եկողներ:*

*Զուգադիպութեամբ մը, Բ. Աշխարհամարտի յաջորդած տարիներու ներգաղթի մասին գիրքեր լոյս կը տեսնեն՝ յիշողութիւն եւ գրականութիւն միախառնելով: Այդ էջերու ընթերցումը ներազգային իմաստութեան առջեւ դուռ կը բանայ:*

*Իմաստութեան դուռ, որպէսզի բարի կամեցողութիւնները խութի չզարնուին:*

*Յաւակնութիւնը չունիմ այդ նիւթով հրատարակուած ամբողջ գրականութիւնը կարդացած ըլլալու: Առաւելաբար գիս հետաքրքրեցին այդ տարիները անպաճոյճ եւ կամ գեղարուեստական գրականութեան ճամբով սեւեռող գիրքերը: Անոնց պատմածը մեր կեանքն է: Եթէ ուրիշներ ալ կան, լաւ է, որ անոնց մասին արտայայտուին «ընթերցող»-ներ:*

*Առանց վարդապետական ըլլալու արհեստական ճիգի՝ երեք փոքրածաւալ գիրքեր գրաւեցին ուշադրութիւնս, երեքն ալ՝ գրուած հայրենադարձներու «աշխարհ»-ի տպաւորութիւններու ինքնուրոյն մթնոլորտին մէջ. անկասկած՝ յիշողութիւններ, բայց նաեւ՝ մասնաւոր պարագաներէ անդին անցնող մտածումներ, յոյսերու եւ բեկումներու բախման գեղարուեստական պատկերներ:*

*Տարբեր հասցէներէ եկած՝ հայրենադարձներու պատմութիւններ: Նմանութիւններ միշտ կրնան ըլլալ, բայց կացութիւններու դիմագրաւումը եւ անոնց յառաջացուցած հակազդեցութիւնները միշտ ենթակայական են, ապրումներ՝ նոյն եւ տարբեր, մարդկայինի, անհատականի եւ հայրենասիրականի միախառնուող եւ զանազանուող տեսարաններով:*

*Գրողներ Ալիս Յովհաննիսեանը եւ Յակոբ Յարութիւնը, օփերայի երգիչ եւ ղեկավար Տիգրան Լեւոնեանը, կը պատմեն «ներգաղթ»-ը եւ «ներգաղթողներ»-ը, պատկերներ, այնքան հեռու եւ մօտ հարազատ պատմութիւն, որ թէեւ այնքան ալ հին չէ որպէս հոգեկան խռովք, անհատականի եւ հաւաքականի չզանազանուող յիշողութիւններ, հայրենահանումէ ետք թափառումներ, նոր կայքեր, կեանք, որ կը շարունակուի պատշաճեցումներով:*

*Ապագայակերտ կ՚ըլլայ այս գրականութեան տարածումը, Հայաստան եւ սփիւռք(ներ: Սերունդները կրնան փոխուիլ, բայց վերաբերումները կրնան կրկնուիլ: Հարկ է գիտնալ եւ կանխել:*

*Ցեղասպանութենէ ճողոպրած հայրենահանուածներ իրենք զիրենք գտած էին տարբեր եւ նոր երկինքներու տակ, Պէյրութ, սուրիական Թել Քոչաք կամ պուլկարական Ռուսճուկ եւ այլ վայրեր: Նոր եւ օտար աշխարհներ, նոր դրացիներ, որոնց հետ կիսած էին իրենց օրերը: Եւ հուսկ, հայու սրտին այնքա՜ն մօտիկ՝ ներգաղթը, կեանքը իր հունին մէջ դնելու սէրը եւ կարօտը, որոնք կը վերածուին անծանօթի մէջ ոստումի:*

*Բ. Աշխարհամարտի աւարտին տեղի ունեցած «ներգաղթ»-ի մասին հարկ է խօսիլ, խօսիլ նաեւ անոր յաջորդած «ներգաղթողներու արտագաղթ»-ի մասին, որպէսզի հայ ժողովուրդին եւ Հայաստանի համար էական կարեւորութիւն ունեցող «հայրենադարձութիւն» տեղի ունենայ ոչ միայն միաւորներու հոգեկան բաւարարութեան համար: Հայրենադարձութիւն, որ պէտք է կազմակերպել՝ ընելով այնպէս, որ ան յաջողի, չկրկնուի «ներգաղթ»-ի ձախողութիւնը, որ պատճառ դարձաւ տարերային արտագաղթի:*

*Երէկ խորիմաստ էր Շաւարշ Միսաքեանի խօսքը. «Հայրենիքը պանդոկ չէ»: Աւելի քան խորիմաստ էր եւ է այդ խօսքը՝ Հայաստանէն դիտուած, քանի որ ան կը խտացնէ ազգի գոյացման խարիսխը: Ան նոյնքան խորիմաստ է սփիւռքներէն դիտուած, երբ Հայրենիքը «կարօտակէզ» հոգիներու համար զբօսաշրջութեամբ ապրուող բալասան է՝ առանց ազգային-քաղաքական յառաջընթաց ըլլալու: Երկու պարագաներուն ալ մենք մեզ կը գտնենք հայրենատիրութեան մարդկային-ազգային-մշակութային-քաղաքացիական գիտակցութեան նահանջին առջեւ, զոր հասկնալ-բացատրելու-արդարացնելու բոլոր կեղծիքները խտացնող ճառերը անհետացման առաջնորդող մայրուղիներ են:*

*Հայրենիքի տէր ըլլալու պայմանները կը ստեղծուին քաղաքական եւ գաղափարախօսական կամքով: Յաջողելու համար արմատ նետելու կարելիութիւն պէտք է տալ հայրենադարձին՝ դիւանակալական ճապկումներով պատեր չբարձրացնելով: Որպէսզի հայրենադարձը արմատ նետէ, հարկ է վնասազերծել այն բոլոր անհարթութիւնները, որոնք արմատներու աճումը կ՚արգելակեն եւ կը փտեցնեն: Պետական եւ համազգային գիտակցութեամբ, բացասական վերաբերումները հարկ է առանձնացնել եւ անոնց դէմ մղել իսկական անխնայ պայքար:*

*Հայրենադարձութիւնը նեցուկի պէտք ունի՝ բարոյական, վարչական, մշակութային, նիւթական: Ժողովուրդը, պետական եւ քաղաքային վարչութիւնները պիտի հասկնան, որ հայրենադարձները կը վերագտնեն նոր աշխարհ եւ միջավայր, վարժութիւնը եւ պատշաճեցումը պէտք է դիւրացնել, որպէսզի հայրենադարձը չմտածէ կրկին երկրէն դուրս գալու մասին, քաջ գիտնալով, որ այդ երկրորդ ելքը կ՚ըլլայ անվերադարձ եւ ազգի համրանքի վերջնական կորուստ: Վերջին տասնամեակներուն Հայաստան ապաստան գտածներ կրկին սփիւռքացած են, ինչ որ գաղափարական պարտութեան արտայայտութիւն է:*

*Ֆրանսայէն ներգաղթած հայը երբ դէպի Ֆրանսա արտագաղթեց, ֆրանսական թերթը գրեց, որ՝ «Ան վերադարձաւ իր հայրենիքը»... Ի՜նչ ծաղր...*

*Պետութեան, լրատուամիջոցներու եւ ընկերային բոլոր կառոյցներու նպաստով պէտք է ապահովել հայրենադարձի անխոչընդոտ համարկումը հայրենիքի տնտեսական, ընկերային եւ քաղաքական կեանքին, որպէսզի՝ «Իրենց չպատկանող հայրենիքը չվերադառնան»:*

*Այս համարկումը չ՚իրականանար բաժակաճառերով:*

*Մանաւանդ պէտք է հասկնալ նաեւ, որ բոլոր սփիւռքահայերը միլիոնատէր չեն, միլիոնատէր չեն նաեւ բոլոր հայրենադարձները:*

*Ալիս Յովհաննիսեանի, Յակոբ Յարութիւնի եւ Տիգրան Լեւոնեանի վկայութիւնները պէտք է հասնին հայրենի ժողովուրդի իւրաքանչիւր ընտանիքի, որպէսզի հայրենադարձը ըլլայ հարազատ, չդիտուի որպէս օտար: Այդ դրական վերաբերումը կրնայ բանալ դարպասը աւելի մեծաթիւ հայրենադարձութեան: Հայրենադարձութիւնը ազգի եւ հայրենիքի հզօրացում է: Կը յառաջանա՞յ այս գիտակցութիւնը զանգուածներուն համար, ներսը եւ դուրսը:*

*Եւ նկատի ունենալով օրինակի արժէքը՝ կազմակերպուած եւ յաջողած հայրենադարձութիւնը կրնայ նաեւ ազդու դարմանը ըլլալ վարակ դարձած արտագաղթին:*

*Այս հարցի մասին պէտք է խօսիլ առանց հռետորական աղմկարարութեան, խօսիլ ազգային ապագայի տեսիլքի մը իրականացման սիրով եւ հաւատքով, անհատական եւ հաւաքական յանձնառութեամբ:*

*Հայրենադարձութիւնը յաղթանակ է՝ ընդդէմ Ցեղասպանութեան եւ հայրենահանման:*

*Ո՛չ տխրութիւն, ո՛չ հանդգամանք, ո՛չ երեւելիութիւն:*

*Եւ ոչ բարոյական բեմական անվաղորդայն յուզում, այլ՝ քաղաքական աքթ:*

*Հարկ է ունենալ բաւարար ազգային գիտակցութիւն եւ հպարտութիւն, աշխարհներու միւս ծայրերէն չդիտելու համար Արարատի գլխէն կախուած «Լուսաւորչի Կանթեղը», եւ հայրենատէր ըլլալու համար ըլլալ ներկայ, ոչ՝ սոսկ բարեսէր եւ ոչ ալ՝ եկող-գացող «տուրիստ»:*

Յ. ՊԱԼԵԱՆ




























*Առողջապահական*

## Գլխացաւի Հինգ Պատճառներ

*Եթէ անդադար գլխացաւ կ'ունենաք, հետեւաբար գիտէք, որ անիկա ի յայտ կու գայ ամէնէն անսպասելի պահերու՝ խանգարելով ձեր կեանքին սովորական ընթացքը։*

*Դեղարանները կրնաք գտնել գլխացաւի ցաւազրկիչներու մեծ տեսականի, բայց այդ դեղահատերը ժամանակաւոր լուծումներ կը բերեն եւ կը վնասեն ձեր առողջութեան։ Նախքան դեղահատերու դիմելը՝ կարեւոր է հասկնալ, թէ որո՛նք են գլխացաւ պատճառող հիմնական ազդակները։*

1

*Քաֆէինը*

*Գլխացաւ կը յառաջանայ մարմնի ջրազրկման պատճառով, իսկ մարմնին մէջ քաֆէինի մեծ քանակը կը ջրազրկէ ձեր մարմինը եւ գլխացաւ կը պատճառէ։ Ահա թէ ինչո՛ւ պէտք է զգուշանաք քաֆէինէն։*

2

*Քունի պակասը*

*Եթէ գիշերը բաւարար չէք քնանար, ոչ միայն գլխացաւեր պիտի ունենաք, այլեւ՝ ջղային վիճակ, կեդրոնացումի պակաս, յիշողութեան հարցեր։ Օրական ութ ժամ քունը անհրաժեշտ է բոլորին։*

3

*Երկ ժամեր չուտելը*

*Եթէ օրուան ընթացքին կանոնաւոր ձեւով սնունդ չէք ստանար, արեան մէջ շաքարի մակարդակը կը բարձրանայ, իսկ ասիկա հիմնական պատճառներէն մէկն է գլխացաւ ունենալու։*

4

*Ընկճախտը*

*Իւրաքանչիւր ընկճախտ բացասաբար կ'անդրադառնայ ձեր առողջութեան վրայ, իսկ առաջին հերթին կը տուժէ ձեր գլուխը։*

*Թերեւս ժամերով աշխատիլը ձեզի համար նեղացուցիչ չէ, բայց մարմնին համար ամենալուրջ պատճառներէն է, որ մարմինը կը սկսի ազդանշան ուղարկել՝ գլխացաւի տեսքով։*

# Փոխուիլ՝ Դառնալու Համար Աւելի Լաւ

*Կեանքը նոր էջէ մը սկսելու կարիք չկայ, բայց կարգ մը բաներ սրբագրելը կամ աւելցնելը սխալ չէ, ըսած է չին փիլիսոփայ մը։*

*Ահա՛, թէ ինչ կը թելադրէ ան.*

*– Ըրէք այն, ինչ երկար ժամանակէ ի վեր կը ցանկաք ընել, բայց չէք համարձակիր։*

*– Ձեր առջեւ նպատակներ դրէք եւ աշխատեցէք հասնիլ անոնց։*

*– Աւարտեցէք սկսուածը եւ երբեք մի յանձնուիք։*

*– Մի՛ փորձէք փոխել այն, ինչը փոխել անհնարին է։*

*– Ձեր հոգիին հարազատ զբաղում մը գտէք։*

*– Փորձեցէք ամէն ինչ ընել ժամանակին, վաղուան բան մի՛ ձգէք։*

*– Եթէ դժգոհ էք ձեր գործէն, նորը գտէք։*

*– Ճիշդ ձեւով սնանեցէք եւ մարզանք ըրէք։*

*– Ժամանակ առ ժամանակ ուրախացուցէք դուք ձեզ։*

*– Որքան կրնաք, ճամբորդեցէք եւ նոր գիտելիքներ ամբարեցէք։*

*– Յարաբերեցէք ձեզի հաճելի անձերու հետ։*

*– Դուրս նետեցէք աւելորդ բաները ոչ միայն տունէն, այլեւ՝ գլուխէն։*

*– Դարձէք բնութեան ընկերը։*

*– Պզտիկ խնայողութիւն մը մէկ կողմ դրէք «սեւ օր»-ուան համար։*

*– Ներեցէք, ոխակալ մի՛ ըլլաք։*

*– Ականջ դրէք ձեր սրտի ձայնին։*

## Հացին Խորհուրդը՝ Հայերուս Մէջ

*Հայերուս մէջ դարերէ ի վեր հացը նոյնացած է ճաշի, հիւրընկալութեան, խաղաղութեան, հաշտութեան, խնճոյքի եւ տօնի հետ։*

*Հայերս մինչեւ օրս հացասէր եւ հաց շատ ուտող ժողովուրդ ենք։ Հին Հայաստանի մէջ հացը եղած է առատութեան, հիւրասիրութեան եւ խաղաղութեան խորհրդանիշ։ Եթէ հայը հիւրին առջեւ հաց դնէր, կը նշանակէր, որ իր տան դռներն ու սիրտը բաց են անոր համար։ Հոնկէ ալ եկած է աղուհացով դիմաւորելու հայկական սովորութիւնը։*

*Հացին Հետ Կապուած Հետաքրքրական Գիտելիքներ*

*– Հայաստանի հեռաւոր գիւղերուն մէջ մինչեւ օրս ալ հացը դանակով չեն կտրեր, այլ կը բաժնեն ձեռքով, որպէսզի հացը ցաւ չզգայ դանակի սուր շեղբէն։*

*– Հայկական աւանդական հարսանեկան արարողութեան մէջ հացը գլխաւոր դեր ունի. տան շեմին փեսային հայրը մէկական լաւաշ կը փռէ նորապսակներու ուսերուն, որպէսզի հարսը «հացով մտնէ տուն»։*

*– Հայերը սուրբ համարած են թոնիրը, որուն մէջ հացը թխուած է։ Բոլոր գիւղերուն մէջ թոնիր շինելու ատեն կանչած են քահանան, որպէսզի օրհնէ։ Թոնիրէն հանուած առաջին հացը կը ղրկուէր այն տունը, ուր հիւանդ կար։ Հացը տեսնելով՝ հիւանդը ապաքինելու հաւատքով կը լեցուէր։*

*– Հին Հայաստանի մէջ հացթուխը չէին դատեր ու չէին սպաններ, ան անձեռնմխելի էր։*

*– Հացերէն ամէնէն երկարակեացը լաւաշն է. անիկա իր թարմութիւնը կը պահէ շուրջ վեց ամիս։ Լաւաշը կարելի է չորցնել, յետոյ տեղ-տեղ վրան ջուր ցանելով՝ ստանալ նախկին փափկութիւնը։*

*– Կը պատմուի, որ Գրիգոր Մագիստրոս Պահլաւունին սովորութիւն ունէր մագաղաթին վրայ գրելու ժամանակ կտոր մը հաց դնելու իր առջեւը. ատիկա նշան էր, որ ինք ճշմարտութիւնը կը գրէր. «Հացին նայելով մարդ եօթնապատիկ ճշմարտախօս կը դառնայ», կ'ըսէր ան։*

*– Հեթանոս հայերը Ոսկեմայր կը կոչէին Անահիտ աստուածուհին։ Արտերը հնձելէ ետք, առաջին բերքի հասկափունջերով կը ծածկէին անոր արձանը՝ այն հաստատ համոզումով, որ գոհաբերութեամբ կ'ապահովէին իրենց բերքին առատութիւնը եւ զայն կը պաշտպանէին բնութեան աղէտներէն։*


Linda Kharaboyan | Notaire Notary
Ձեր նոտարական և իրաւաբանական հարցերն ու ծրագիրները վստահեցէք մեզի
Vos affaires. À cœur.
Therrien Couture
3111, boul. Saint-Martin O., #500
Laval (Québec) H7T 0K2
t. 450 682.5514 - 855 633.6326
linda.kharaboyan@therriencouture.com
therriencouture.com

VIZUALIS
optométriste
DR SHANT DONABEDIAN
Centre d'Achat Fairview · Fairview Mall
Pointe Claire
514 695 2555 · VIZUALIS.CA

PHOTO Cristal
(514) 744 4313

Berj Merdjanian
Mariage - Portrait - Graduation
Restauration - Commercial - Passeport
Publicité - Lamination - Encadrement
Video - Reproduction
647 Boul.Decarie
VSL.Montreal QC
H4L 3L3
photocristal@hotmail.com
www.photocristal.com

Assura Bien inc.
Cabinet en assurance de dommages et de services financiers
Ապահովագրական գրասենեակ
KRIKOR ABRAKIAN VAHAN MATOSSIAN
970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc, H4T 1W7
T: 514.903.3999

RITA BAGHDASSARIAN
Conseillère en Sécurité Financière
Revenu Garantie Viager
COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELI) • CRÉATION D'HÉRITAGE • REER_FERR RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ • ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE & COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT
3820, boul. Lévesque Ouest, Bureau 101,
Laval Qc. H7V 1E8
Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262
ritabagh@yahoo.com

TAXI MIRABEL
450-430-2650
Taxi Mirabel Հայկական հաստատութիւնը կարիքը ունի 20 հայ թաքսի վարորդի Միրապէլ շրջանին մէջ։
Հաճեցէք հեռաձայնել Արային (514) 979-1317 թիւին։
Taxi Mirabel needs Mirabel area taxi drivers with pocket number, besoin de chauffeur de taxi. Call/Appelez: (514) 979 1317


RE/MAX
RE/MAX 3000 inc.
Agence immobilière
Elie Berberian
Courtier immobilier | Real Estate Broker
C 514.519.3543
B 514.333.3000


ONGLES CAROLE
HAMPARTSOUMIAN
POSE D'ONGLES
RÉSINE ET POUDRE
MANICURE & PÉDICURE AVEC GEL
RECOUVREMENT SUR ONGLES NATURELS
Առողջ եղունգներու խնամքի համար հեռաձայնել՝
514 941-0014 LAVAL

KRIKOR MAROUNIAN RLU
Independent Financial Security Broker
Life Insurance • Disability & Critical Illness Insurance
Group Insurance • Pension Plans
Travel/Visitor Medical Insurance
11820 General Giraud
Montreal, QC H4J 2H6
Res: (514) 332-7021
Fax: (514) 332-7376
Cell: (514) 927-2666
krikormar@gmail.com

FIVE STAR
ELECTRIQUE
CINQ ÉTOILES
SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING
RESIDENTIAL-COMMERCIAL
BEDROS NALPATIAN
442, LA RIVIÈRE, LAVAL, QC.
TEL: 514 - 497- 5155 FAX: 450 - 689- 3997
E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM


SOSIE DERNERSESSIAN
MORTGAGE AGENT
LICENCE #M12001830
716 Gordon Baker Road,
Unit 204A, Toronto
Ontario M2H 3B4
CENTUM
Metrocapp Wealth Solutions Inc.
License # 12147
Mortgage programs for new comers to Canada
New purchases
Refinancing
Second mortgages
Self employed
Low credit score
Access to top lenders including private lenders
416.662.6650 cell
centum.ca/sosie_dernersesian

[AB]
ALINE BEKEREJIAN
NOTAIRE - NOTARY
180, rue Fleury ouest
Montréal, Qc, H3L1T5
T 514.382.7222
F 514.381.1818
aline.b@notarius.net
www.abnotaires.com
Նոտար եւ Իրաւաբանական Խորհրդատու՝ Ալին Պեքէրէճեան

10 ՏԱՐԻ… Սկիզբը էջ 3

*ման առաջին իսկ օրուանից: Ես լիայոյս եմ, որ այդպէս է լինելու նաեւ հետագայում:*

Հ.- Տիկի՛ն Յակոբեան, իշխանափոխութեան ներկայ պայմաններում, երբ կառավարութեան նոր կազմ է ձեւաւորւում, խօսակցութիւններ են գնում ՀՀ սփիւռքի նախարարութեան անհրաժեշտութեան մասին: Խնդրում եմ ձեր կարծիքը՝ հարցի վերաբերեալ:

*Պ.- Նախ՝ ցանկանում եմ ընդգծել, որ ՀՀ սփիւռքի նախարարութիւնը ստեղծուել է սփիւռքի պահանջով: Այդ մասին հնչել է Հայաստան-սփիւռք մի քանի համաժողովների ընթացքում: Նախարարութեան ստեղծումը համընկաւ Հայաստանի եւ սփիւռքի համար իրաւական, քաղաքական բարդ ժամանակահատուածի հետ, երբ տեղի էին ունեցել 2008 թուականի մարտի 1-ի իրադարձութիւնները, ինչպէս նաեւ ստորագրուել էին հայ-թուրքական արձանագրութիւնները, ինչի պատճառով սփիւռքի ստուար հատուածը երես էր դարձրել Հայաստանից, չկար վստահութիւն, եւ դժուար էր գտնել համագործակցութեան եզրեր: Ահա այս ծանր պայմաններում մի կողմից՝ մեր խմբով 0-ից պետական կառավարման նոր հիմնարկ էինք ստեղծում, իսկ միւս կողմից՝ մասնագէտներ էինք պատրաստում եւ փորձում երկխօսել ու գործակցել սփիւռքի հետ:*

*Յետահայեաց գնահատելով՝ կարող եմ ասել, որ մեզ յաջողուեց 827 համայնքների եւ հարիւրաւոր կազմակերպութիւնների ու կառոյցների հետ աշխատել, ծրագրեր իրականացնել: Բոլոր ձեռնարկները նպատակաուղղուել են հայրենաճանաչութեանը, հայապահպանութեանը, հայրենիք-սփիւռք կապերի ամրապնդմանը: Իսկ որոշակի գործերն ու ծրագրերը ես արդէն թուարկեցի:*

*Ձեր հարցին ի պատասխան՝ նկատեմ, որ սփիւռքը դարձել է սահմանադրական հասկացութիւն, հիմնական օրէնքով ամրագրուել են պետութեան անելիքները՝ հայկական սփիւռքի հետ կապուած, կարեւորուել են հայապահպանութիւնն ու հայրենադարձութիւնը, այլ պետութիւններում հայոց լեզուի, հայկական պատմական եւ մշակութային արժէքների պահպանումը, հայ կրթական եւ մշակութային կեանքի զարգացումը, ազգային միասնութեան ամրապնդումը, համապետական ու համազգային շահերը (ՀՀ սահմանադրութեան 19-րդ, 123-րդ, 127-րդ եւ այլ յօդուածներ):*

*Ուստի, սփիւռքի հետ աշխատանքներն առաւել քան կարեւոր են: Այսօր նախարարութիւնում աշխատում են քաղաքացիական ծառայողներ, իսկ քաղաքացիական ծառայութեան անցնելու պարտադիր պայման է Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի լինելը: Հայրենիք-սփիւռք կապերի իրաւատէրերը ոչ միայն ՀՀ քաղաքացիներն են, այլեւ՝ տարբեր պետութիւններում ձեւաւորուած հայկական համայնքների անդամները, հետեւաբար կարելի է այնպիսի լուծում գտնել, որ սփիւռքահայերը նոյնպէս աշխատելու հնարաւորութիւն ստանան:*

Հ.- Ինչպէ՞ս էք պատկերացնում ձեր հետագայ գործունէութիւնը:

*Պ.- Ակնյայտ է, որ ձեւաւորուելու է նոր խումբ՝ նոր մօտեցումներով եւ ծրագրերով: Ես լիայոյս եմ, որ այդ խումբը յաջողութիւններ կ՛արձանագրի, որ Հայաստանում եւ սփիւռքում մեր հայրենակիցների սպասումներն իրականութիւն կը դառնան, եւ, ի հարկէ, սփիւռքեան ոգեւորութեան արդիւնքում նաեւ հայրենադարձութեան ծաւալները կ՚ընդլայնուեն:*

*Իսկ ես այսուհետ եւս կը շարունակեմ ծառայել երիտասարդների կրթութեան գործին, մեր պետութեան ու ազգի շահերին:*

Հ.- Ի՞նչ կ՚աւելացնէիք հարցազրոյցի աւարտին:

*Պ.- Դիմում եմ իմ սիրելի հայրենակիցներին, սփիւռքահայերին, աշխարհի տարբեր անկիւններում ապրող իմ քոյրերին ու եղբայրներին եւ հպարտօրէն ասում, որ ինձ վիճակուեց իմ համախոհների հետ, ձեր անմիջական աջակցութեան շնորհիւ ստեղծել եւ կայացնել ՀՀ սփիւռքի նախարարութիւնը: Հայաստանի անկախացումից յետոյ սփիւռքահայերի ոգեւորութիւնը, հայրենիքին ծառայելու եւ հայրենիքի հետ գործակցելու ցանկութիւնները շատ դէպքերում մնում էին չհամակարգուած, եւ այդ պատճառով դուք յաճախ հիասթափւում էիք եւ չէիք կողմնորոշւում, թէ որտեղ գտնէք ձեր հարցերի պատասխանները:*

*Սփիւռքի նախարարութիւնը դարձաւ այն դուռը, այն կենտրոնը, որտեղ լսեցին ձեզ, գործակցեցին ձեզ հետ, քննարկեցին բազում-բազում հարցեր Հայաստան-սփիւռք գործակցութեան վերաբերեալ, մշակուեցին եւ իրականացուեցին բազմաթիւ հայանպաստ ծրագրեր՝ քայլ առ քայլ կոտրելով նախկինից եկող կարծրատիպերը եւ ամրապնդելով համազգային համերաշխութեան եւ գործակցութեան համար անհրաժեշտ հիմքերը:*

*Մենք մեր խմբով արեցինք այն, ինչ հնարաւոր էր եւ ինչ կարող էինք:*

*Ես եղայ շատ համայնքներում, տեսայ ձեր ազգային կերպարը, հայրենասէր ոգին եւ երիտասարդութեանը հայ պահելու հերոսական քայլերը: Ձեզանից ես շատ բան սովորեցի, դուք եղաք իմ խորհրդատուն եւ աջակիցը, քննադատը, բարեկամն ու ընկերը: Խորապէս շնորհակալ եմ եւ երախտապարտ, որ հնարաւորութիւն եմ ունեցել ձեզ հետ աշխատելու:*

*Վստահ եմ՝ մեր ցանած սերմերը փարթամօրէն կը ծլարձակեն, մեր բացած ակօսները առաւել կը խորանան եւ նոր հանգրուանների կը հասնեն:*

*Համոզուած եմ, որ ներկայ իրադրութեան պայմաններում նոր կառավարութիւնը կը շարունակի մեր ազգաշահ գործերը եւ մեծ թափ կը հաղորդի հայրենադարձութեանը:*

*Ցանկանում եմ խորին շնորհակալութիւն յայտնել Հայ եկեղեցու հոգեւոր պետերին, աւանդական կուսակցութիւնների ղեկավարութեանը, նրանց ուղեկից քոյր կառոյցներին, Հայկական բարեգործական ընդհանուր միութեան ղեկավարներին եւ նրան կից բոլոր կազմակերպութիւնների ղեկավարներին ու անդամներին, հայկական հարիւրաւոր համայնքների առաջնորդներին, մշակութային, կրթական, գիտական, երիտասարդական, կանանց, մարզական եւ այլ կառոյցներին, բոլոր անհատներին, որոնք անցած տարիների ընթացքում գործակցեցին մեզ հետ, մասնակցեցին մեր ծրագրերին եւ օգնեցին մեզ՝ առաւել կամրջելու սփիւռքը հայրենիքին:*

*Խորին երախտագիտութիւն եմ յայտնում սփիւռքեան համայնքներում ազգանուէր գործունէութիւն ծաւալող բոլոր հայորդիներին՝ երիտասարդների շրջանում հայի վսեմ նկարագիրն ու հայրենասէր ոգին վառ պահելու, հայրենիքին մշտապէս զօրավիգ լինելու համար:*

*Պատիւ եմ համարում աշխատանքը սփիւռքի համար եւ սփիւռքահայերի հետ:*

*Շնորհակալ եմ արդիւնաւէտ համագործակցութեան համար:*

*Մաղթում եմ բոլորիդ ամենայն բարիք:*


Այցելեցէք Ս. Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցւոյ
Կիրակնօրեայ դպրոցի կայքէջը՝
www.sourphagop.org

CAREGIVER
Կը փնտռենք մեր տան մէջ մեր ընտանիքին համար ճաշ եփող կին մը:
Հետաքրքրուողներէն կը խնդրուի հեռաձայնել 514 914-0910 թիւին:

CAREGIVER
Կը փնտռենք հայ տիկին մը, որ կարենայ խնամել եւ զբաղեցնել տարեց տիկին մը իր տանը մէջ:
Հետաքրքրուողներէն կը խնդրուի հեռաձայնել 514 914-0910 թիւին:

ALINE BEKEREJIAN
NOTAIRE • NOTARY
ՆՈՏԱՐ Ալին Պէքէրէճեան

| Achat | Առեւտուր | Purchase |
|---|---|---|
| Hypothèque | Անշարժ Կալուածք | Mortgage |
| Refinancement | Վերաֆինանսաւորում | Refinance |
| Mandat | Պատուէր | Mandate |
| Testament | Կտակ | Will |
| Succession | Կալուածք | Estate |
| Mariage | Ամուսնութիւն | Marriage |
| Procuration | Փոխանորդագիր | Power of Attorney |

Services offerts en Arabe, Arménien, Français et Anglais
Services offered in Arabic, Armenian, French and English.

180, rue Fleury ouest
Montréal, Qc, H3L1T5
T 514.382.7222
F 514.381.1818
aline.b@notarius.net
www.abnotaires.com
Ծառայութիւնները կը մատուցուին Արաբերէն, Հայերէն, Ֆրանսերէն, եւ Անգլերէն լեզուներով:

Voyages HAIG Travel
Ձեր բոլոր ճամբորդական կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676
ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ…
ԼԱՒԱԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ
PERMIS DE QUÉBEC
3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677



horiZon
HORIZON
**Hebdomadaire arménien**
**Armenian Weekly**
Publié par / Published by
**Les Publications Arméniennes (1991)**
3401, Olivar-Asselin
Montréal, Québec
Canada H4J 1L5

**Abonnement annuel / Yearly subscription**
**Canada**
2e classe - 2nd class: $80
plus applicable taxes
1re classe - 1st class: $95
**États-Unis / USA**
1re classe - 1st class: $95 US
**Ailleurs / Elsewhere**
1re classe - 1st class: $125 US

**Administration / Publicité**
Sylva Ehramdjian-Bachekjian
**(General Manager)**
Tél.: (514) 332-3757
Télécopieur/Fax (514) 332-4870
E-Mail:sylva@horizonweekly.ca
Courrier de deuxième classe
/No. 40065294 / Second class mail
Dépôt légal: bibliothèques nationales du Québec et du Canada - ISSN 0708580X

**Վարիչ Խմբագիր**՝ Վահագն Գարագաշեան
**Վարչական պատասխանատու**՝ Սիլվա Պաշըգճեան
**Քարտուղար**՝ Մարինա Տէր Խաչատուրեան
**Աւագ խմբագիր**՝ Վրէժ-Արմէն Արթինեան
**Անգլերէն/Ֆրանսերէն**՝ Վիգէն Աբրահամեան, Թինա Սիլահեան
**Ձեւաւորում**՝ Նէնսի Կիրակոսեան
**Սրբագրիչ**՝ Սոնա Թիթիզեան

**Թորոնթոյի Ներկայացուցիչներ**՝ Գրիգոր Հորոյեան, (416) 494-1921; Ժագ Վարպետեան, (416) 722-9225

**Լուսանկարիչներ**՝ Արմէն Ալեմեան, Մայք Թաշճեան, Իշխան Ղազարեան, Վազգէն Տէկիրմէնճաշ



Financé par le gouvernement du Canada
Funded by the Government of Canada
Canada




**«Յորիզոն» շաբաթաթերթի 2018 թուականի վարժողական ծրագիր**

Գանատայի աշխատանքի եւ ընկերային զարգացման պետական բաժանմունքին կողմէ տրամադրուած յատուկ ֆոնտով, «Յորիզոն» շաբաթաթերթը այս տարի կը նախաձեռնէ ուսանողական վարժողական ծրագիր:

**Աշխատանքի մանրամասնութիւններ**
- «Յորիզոն»ի ամէնօրեայ խմբագրական աշխատանքներու ծիրէն ներս թարգմանութիւններ կատարել, անգլերէն, հայերէն եւ ֆրանսերէն լեզուներով:
- Գաղութային ձեռնարկներու թղթակցութիւններ կատարել:
- Յարցախոյզներ կազմակերպել:
- «Յորիզոն»ի վարչական աշխատանքներուն օգնել :
- Բաժանորդագրութիւններու գործընթացը հետապնդել:
- Արխիւներ դասաւորել :

**Պայմաններ**
- Թեկնածուն 15-30 տարեկան, երկրորդական վարժարանի, Cegep-ի կամ համալսարանի ուսանող պէտք է ըլլայ:
- Պէտք է լիաժամ ուսանող ըլլայ, որ վարժողական ծրագրէն ետք վերստին իր ուսումը շարունակէ:
- Պէտք է Գանատայի քաղաքացի, մնայուն բնակիչ, կամ Immigration and Refugee Protection Act-ի օրէնքներով սահմանուած ապաստանեալ (Refugee) ըլլայ:
- Պէտք է աշխատելու իրաւունք ունենայ:

**Աշխատանքի տեւողութիւն եւ վարձատրութիւն**

- Վարժողական այս ծրագրի դիմումները կը սկսին Մայիս 1-ին: Ծրագիրը կը սկսի Յունիս 18-ին եւ կ'աւարտի Յուլիս 27-ին:
- Ծրագրի տեւողութիւնն է 6 շաբաթ, շաբաթական 30 ժամ աշխատանքային ժամով եւ 12.00 տոլար ժամական վարձատրութեամբ:

Ձեր դիմումնագրերը ուղարկեցէք «Յորիզոն»ի հասցէին մինչեւ Յունիս 8
3401 Olivar-Asselin, Montreal, Quebec, Canada H4J 1L5
Կամ Ե-նամակով ուղարկել «Յորիզոն»ի վարչական պատասխանատու Սիլվա Էհրամճեանի հասցէին՝ sylva@horizonweekly.ca

Ascenseur **Adams** Elevator
Services Inc.
PO Box 30, St-Laurent, Qc. H4L 4V4
***RBQ# 1812-6474-22***

**www.adamselevator.ca**

**TEL: 514-745-4455 - FAX: 514-745-6613**

*RENOVATION, REPAIRS, MAINTENANCE, INSTALLATION OF ELEVATORS.*

Eddie, Pedro, Joyce Oughourlian

ՀՈՐԻԶՈՆ

ՀԱՍՑԷ՝ 3401 Olivar-Asselin Montréal, Québec H4J 1L5

Բաժանորդագրուեցէք «Հորիզոն» շաբաթաթերթին

ԱՆՈՒՆ-ՄԱԿԱՆՈՒՆ ------------------------
------------------------
ՀԱՍՑԷ ------------------------
------------------------
------------------------

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ՝ Գանատա 80 տոլար առաւել տուրք
Մ. Նահանգներ՝ 95 ամ. տոլար առաւել տուրք
Եւրոպա եւ Միջին Արեւելք՝ 125 ամ. տոլար առաւել տուրք

Ձեր բաժանորդագրութիւնը ապահովելու համար կապ հաստատեցէք «Հորիզոն»ի վարչութեան հետ:

Հեռաձայն՝ 514 332-3757
Ե-նամակ՝ sylva@horizonweekly.ca







## CASSANDRA I.D.A. PHARMACY

**ARMENIAN MEDICAL CENTRE**
**& PHARMACY**

PHARMACISTS
**SARKIS BALIAN,** BScPhm, RPh
**MARAL BALIAN,** PharmD, RPh
**VARTAN BALIAN,** PharmD, RPh

ՍԵՓԱԿԱՆԱՏԷՐ՝
**ՊԱԼԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ**

ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐ՝
**ՄԱՐԱԼ ՊԱԼԵԱՆ**
**ՎԱՐԴԱՆ ՊԱԼԵԱՆ**

- Դեղագիրներու պատրաստութիւն՝ շաբաթական յատուկ տուփերու մէջ:
- Արեան ճնշման քննութիւն եւ հետեւողականութիւն՝ անվճար
- Շաքարախտի քննութիւն
- Դեղերը իրենց հասցէներուն առաքելու անվճար սպասարկութիւն
- Տարեցներու 10% զեղչ
- Կը յարգենք եւ սիրով կը կատարենք բոլոր ապահովագրական ընկերութիւններու պայմանները
- Walk-In Clinic բաց է շաբաթը 6 օր: Կրնաք բժիշկները տեսնել առանց ժամադրութեան:

***Դիմեցէք մեզի եւ պիտի դառնաք մեր մնայուն յաճախորդը:***

**Walk-in Clinic onsite: (416) 331-9111**

**հասցէ՝ 2040 Victoria Park Ave. (Victoria Park & Cassandra)**
**Toronto, Ontario M1R 1V2 Tel.: (416) 449-2040 Fax: (416) 449-2048**






Horizon, 3401, Olivar-Asselin, Montréal, Québec Canada H4J 1L5 Courrier de deuxième classe /No. 40065294 / Second class mail